



Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի

Վանաձորի գրասենյակ



OPEN SOCIETY
FOUNDATIONS

ՏԵՂԵԿԱՆՔ

2016 Թ. ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԵՎ ԼՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՆԱԿՈՒՄ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ

2016

Հեղինակներ՝

Արմինե Սաղիկյան

Հասմիկ Կարապետյան

Խմբագիր՝

Արթուր Սաքունց

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Ամփոփ նկարագիր

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թ.-ի ընթացքում մահացությունների վերաբերյալ տվյալները հավաքագրվել են զանգվածային լրատվամիջոցներով եւ պաշտոնական աղբյուրներով տարածված, ինչպես նաև մահացած զինծառայողների հարազատների կողմից տրամադրված տեղեկություններից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ 2016 թ.-ի ընթացքում ՀՀ զինված ուժերում և ԼՂ պաշտպանության բանակում մահացել է **162 շարքային և պայմանագրային զինծառայող**, ինչպես նաև քառօրյա պատերազմական գործողություններին մասնակցած **կամավորականներ**:

2016 թ-ի ապրիլի 2-ին ռազմական գործողությունների ընթացքում արձանագրվել է նաև **Թալիշում 4 քաղաքացիական անձանց** զոհվելու դեպքեր:

2016 թ-ի մահացության **162** դեպքերից **77-ը՝** ապրիլի 1-5-ն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած պատերազմական գործողությունների հետևանքով են, իսկ մահացության մյուս **85** դեպքերից **34-ը՝** հրադադարի ռեժիմի խախտման, **19-ը՝** դժբախտ պատահարների (9-ը՝ ավտովթարի, 3-ը՝ բնական աղետի /1-ը՝ ձնահոսքի, 2-ը՝ ջրհեղեղի/, 2-ը՝ բլինդաժի փլուզման, 2-ը՝ մեքենաներ վարելու, շահագործելու կանոնների խախտման, 1-ը՝ հոսանքահարման, 1-ը՝ ջրահեղձման, 1-ը՝ ականի պայթյունի), **13-ը՝** սպանության (5-ը՝ զենքի հետ վարվելու կանոնների, 3-ը՝ կանոնադրային հարաբերությունների խախտումների հետևանքով, 3-ը՝ դեռևս չհստակեցված հանգամանքներում, 2-ը՝ դիտավորյալ), **13-ը՝** ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու հետևանքով, **4-ը՝** մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հետևանքով և **2-ը՝** առողջական խնդիրների՝ հետևանքով:

Նշված 162 մահացության 2 դեպքերում (1 ավտովթար և 1 ինքնասպանություն) զինծառայողները չեն գտնվել ծառայության մեջ, իսկ ևս մեկ ինքնասպանության մասին պաշտոնական տեղեկատվություն չի տարածվել, բացի լրատվամիջոցների կողմից տարածված տեղեկությունից¹, համաձայն որի՝ 2016 թ. հոկտեմբերի 31-ին Վանաձորում ինքնասպանություն է գործել զինծառայող, կոչումով ենթասպա Մ. Հարությունյանը, հետևաբար՝ չենք կարող ասել՝ արդյոք վերջինս գտնվել է զինվորական ծառայության մեջ:

Ավտովթարի արդյունքում մահացած պարտադիր ժամկետային զինծառայող Արսեն Հովսեփյանի, որն ավտովթարի պահին գտնվել է արձակուրդի մեջ, դեպքի մասին

¹ <http://shamshyan.com/hy/article/2016/10/31/99920/>
<https://news.am/arm/news/354655.html>

պաշտոնական հաղորդագրություն ևս չի տարածվել, սակայն ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը Ռեզոլուցիայի² հետ զրույցում հայտնել է այդ մասին:

ՀՀ ՊՆ N գորմասի, 2-րդ դասակի հրամանատար, կապիտան Մեսրոպ Ղուրշուդյանի՝ իր տան լոգարանում կախվելու միջոցով ինքնասպանության մասին եւս ՀՀ ՊՆ-ն պաշտոնական հաղորդագրություն չի տարածել, իսկ ՀՀ Քննչական կոմիտեի կողմից տարածված հաղորդագրության մեջ չի նշվում զինծառայողի ինքնասպանություն գործելու պատճառը³: Այսինքն՝ ինքնասպանության փաստի եւ զինծառայության հետ կապված խնդիրների միջեւ կապի մասին որեւէ տեղեկատվություն չկա:⁴

Բացի նշվածներից, ևս մեկ զինծառայողի մահվան վերաբերյալ mamul.am լրատվական կայքի կողմից տարածվել էր տեղեկատվություն, որում 2016 թ-ի ապրիլի 21-ին առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը հաստատում է, որ այդ օրերին «Աստղիկ» բժշկական կենտրոնում մահացել է Արցախում վիրավորված զինծառայողներից մեկը, ով վիրավորվել էր ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում: Մահացած զինծառայողի անունը mamul.am կայքի հրապարակման մեջ չի նշվում, հետևաբար կրկին անհասկանալի է մնում զինծառայողի անունն ընդգրկված է հրապարակված տվյալների մեջ, թե՛ ոչ:⁵

2016 թ. օգոստոս ամսին տեղի ունեցած ավտովթարի պատճառով մահացել է ՌԴ ՍԶ N գորմասի պայմանագրային զինծառայող Արտակ Պետրոսյանը:

2016 թ. ակնհայտորեն աճել է ՀՀ զինված ուժերում և ԼՂ պաշտպանության բանակում մահացությունների դեպքերը: Համեմատության համար նշենք, որ **2015 թ.** գրանցվել է մահացության **76** դեպք: **76** դեպքերից **41-ը** հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով են, **21-ը՝** դժբախտ պատահարի (19-ը՝ ավտովթար, 1-ը՝ նոնակի պայթյուն, 1-ը դեռևս չճշտված հանգամանքների), **6-ը՝** ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու, **3-ը՝** սպանության (1-ը՝ դիտավորյալ, 2-ը՝ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման), **4-ը՝** առողջական խնդիրների հետևանքով է, **1-ը՝** մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հետևանքով:

Ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ հրադադարի ռեժիմի խախտումների հետևանքով զոհերի թիվը 2016 թ-ի ընթացքում՝ չներառելով ապրիլյան պատերազմական գործողությունները, նվազել է 2015 թ-ի համեմատ (2015 թ-ին՝ 41, 2016 թ-ին՝ 34), սակայն կտրուկ աճել է սպանության հետևանքով մահացությունների թիվը՝ մոտ 4 անգամ (2015 թ-ին՝ 3, 2016 թ-

² <http://razm.info/81254>

³ <http://investigative.am/news/view/xurshudyan-mah.html>

⁴ <http://henaran.am/187877.html>

⁵ <http://mamul.am/am/news/83339>

ին՝ 13), ինքնասպանության դեպքերի թիվը՝ գրեթե կրկնակի անգամ (2015 թ-ին՝ 6, 2016 թ-ին՝ 13):


2016 թ. հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով 111 (ներառյալ ապրիլի 1-5-ն ընկած ժամանակահատվածում պատերազմական գործողությունների 77 դեպքերը և մնացած ամբողջ ժամանակահատվածում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով 34 մահվան դեպքերը) մահացության դեպքերից 6-ը տեղի են ունեցել ՀՀ-ում, որոնցից 1-ը Տավուշի մարզի Ճամբարակ համայնքում, 3-ը Տավուշի մարզի Չինարի գյուղից դեպի հարավ-արևելք ընկած պետական սահմանի հատվածում, 1-ը Վայոց ձորի մարզում, իսկ մեկ զինծառայող մահացել է Երևանում՝ ՀՀ ՊՆ կենտրոնական զինվորական հոսպիտալում, որտեղ տեղափոխվել էր Մատաղիսում ծառայելու ընթացքում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով վիրավորում ստանալուց հետո:

2016 թ-ի ընթացքում հրադադարի ռեժիմի խախտումների և դրանց հետևանքով մահացության դեպքերի, կիրառված զենքերի վերաբերյալ վիճակագրական տվյալները և նկարագրությունը

Գծապատկեր 1-ը ներկայացնում է 2016 թ-ին հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թիվն ըստ ամիսների:

Գծապատկեր 1.

2016 թ.-ի ընթացքում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թիվը⁶



Աղյուսակ 1-ում ներկայացվում է 2016 թ-ին հրադադարի ռեժիմի խախտումների վերաբերյալ տվյալները:

⁶ Ապրիլ ամսվա թվային տվյալների մեջ ներառված են նաև պատերազմական գործողությունների ժամանակ մահացած զինծառայողների թիվը՝ 77 հոգի:

2016թ. ընթացքում արձանագրված հրադադարի ռեժիմի խախտումների հետևանքով արձակված կրակոցների թիվն ըստ եռամսյակների

Տարի	1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
2016	101400	Առկա չէ ⁷	30249	77850	209499

Ներկայացված տվյալներից երևում է, որ 2016 թ. առաջին եռամսյակում՝ մինչ ապրիլյան պատերազմական գործողությունները, հրադադարի ռեժիմի խախտումների հետևանքով արձակված կրակոցների թիվն անհամեմատ ավելին է (միայն 1-ին եռամսյակում հրադադարի ռեժիմի խախտումների թիվը գրեթե հավասար է 3-րդ եւ 4-րդ եռամսյակներում արձակված կրակոցների գումարային թվին) վերջին 2 եռամսյակների ընթացքում արձակված կրակոցների թվից, որից կարող ենք եզրակացնել, որ պատերազմական գործողություններից առաջ նկատվել է հրադադարի ռեժիմի խախտումների ակտիվացում:

Ստորև աղյուսակ 2-ը ներկայացնում է 2011-2016 թթ. ընթացքում հրադադարի ռեժիմի խախտման վայրերի և խախտումների հետևանքով զոհերի թվի մասին ամփոփ տվյալները:

Աղյուսակ 2.

2011– 2016 թթ. հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով

մահացության դեպքերը եւ ընդհանուր մահացության դեպքերն ըստ վայրի

Տարեթիվ	Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թիվն ըստ վայրի		Ընդ.	Մահացությունների ընդհանուր թիվը		Ընդ.
	ԼՂ	ՀՀ		ԼՂ	ՀՀ	
2011	11	0	11	20	19	39
2012	2	10	12	22	28	50
2013	1	4	5	9	22	31
2014	23	3	26	32	13	45
2015	34	7	41	46	30	76
2016	105	6	111	131	31	162
Ընդամենը	176	30	206	260	143	403

Աղյուսակում ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ վերջին 3 տարիների ընթացքում կտրուկ աճել է մահացությունների թիվը՝ հրադադարի ռեժիմի խախտումների հետևանքով մահացության դեպքերի թվի հաշվին: Այսպես, մահացությունների ընդհանուր թվի և հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թվի տոկոսային

⁷ 2016 թ. 2-րդ եռամսյակում պաշտոնապես չի տարածվել տեղեկատվություն հրադադարի ռեժիմի խախտումների քանակի վերաբերյալ, ի տարբերություն դրան նախորդող եւ հաջորդող բոլոր ժամանակահատվածների, որոնց ընթացքում ներկայացվել է եւ՝ խախտումների քանակը, եւ՝ կրակոցների թիվը: Այդ պատճառով 2016 թ-ից սկսած ներկայացնում ենք ոչ թե հրադադարի ռեժիմի խախտումների քանակը, այլ արձակված կրակոցների թիվը:

համադրությունը 2011 թ-ին կազմում է 28%, 2012 թ-ին՝ 24%, 2013 թ-ին՝ 16%, 2014 թ-ին՝ 57%, 2015 թ-ին՝ 54%, 2016 թ-ին՝ 68%:

Գծապատկեր 2-ում ներկայացվում է 2016 թ. ընթացքում (բացի ապրիլ-հունիս ամիսները) հրադադարի ռեժիմի խախտումների հետևանքով արձակված կրակոցների թիվը և դրանց հետևանքով զոհված զինծառայողների թիվը:

Գծապատկեր 2.

2016 թ. ընթացքում հրադադարի ռեժիմի խախտումների հետևանքով արձակված կրակոցների թիվը և դրանց հետևանքով զոհված զինծառայողների թիվը



17

2016 թ. ընթացքում (բացի ապրիլ-հունիս ամիսների) հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով զոհերի թիվը



209499

2016 թ. ընթացքում (բացի ապրիլ-հունիս ամիսների) աղբյուրազանակյան զինված ուժերի կողմից հայ դիրքապահների ուղղությամբ արձակված կրակոցների թիվը

2016թ. ապրիլ-հունիս ամիսների ընթացքում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով արձակված կրակոցների թիվը բացակայում է պաշտոնապես հրապարակված չլինելու պատճառով: Այսպիսով, 2016 թ-ի առաջին, երրորդ և չորրորդ եռամսյակների ընթացքում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացած մեկ զինծառայողի հաշվարկով արձակվել է 12323 կրակոց:

Ինչպես նշվեց՝ 2016թ. ապրիլ-հունիս ամիսների ընթացքում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով արձակված կրակոցների թիվը չի հրապարակվել և եթե ապրիլ ամսվա վերաբերյալ վիճակագրության բացակայությունը կարելի է հասկանալ՝ կապված ապրիլյան պատերազմական գործողությունների հետ, ապա մայիս-հունիս ամիսների վերաբերյալ վիճակագրության բացակայությունը անհասկանալի է:

Սկսած 2015 թ-ից ԼՂ ՊՆ մամուլի ծառայության կողմից տարածված հաղորդագրություններում հրապարակվել է նաև հակառակորդի զինուժի կողմից կիրառվող զինատեսակների և դրանց քանակի մասին տեղեկատվություն: ԼՂ ՊՆ մամուլի ծառայության պաշտոնական կայք էջի ուսումնասիրության արդյունքում ստացվել է հակառակորդի կողմից

կիրառված զինատեսակների և դրանցից արձակված կրակոցների հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3.

2015 և 2016 թթ- ին հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման ժամանակ կիրառված զինատեսակները և դրանց կիրառման քանակը

Հրադադարի ռեժիմի խախտման ժամանակ կիրառված զինատեսակները				
	Զինատեսակի կիրառման քանակը 2015 թ.	Կիրառված արկերի քանակը	Զինատեսակի կիրառման քանակը 2016 թ.	Կիրառված արկերի քանակը
Նոնականներ	117	974	79	622
ՌՊԳ-7	47	152 արկ	16	40 արկ
ՌՊԳ - 21	1	Չեն հայտնել	-	-
ՀԱՆ-17	45	749 արկ	43	473 արկ
ԳՊ-25	4	4 արկ	2	7 արկ
ԱԳՄ	2	37 արկ	-	-
ԱԳՄ-17	3	12 արկ	-	-
ԱԳՄ – 18	1	Չեն հայտնել	-	-
ՄՊԳ	1	Չեն հայտնել	-	-
ՄՊԳ-9	2	Չեն հայտնել	-	-
ՀՀՆ-9	-	-	4	6 արկ
Հաստոցավոր- ավտոմատ	-	-	2	57 արկ
Ձեռքի-հակատանկային	-	-	11	30 արկ
Ձեռքի-հակատանկային և ՀԱՆ 17	-	-	1	9
Ականանետեր (հրետանի)	106	6062	98	1382
60 մմ-ոց	43	2545 արկ	55	491 արկ
60 և 82 մմ-ոց	19	526 արկ	10	169 արկ
60, 82 և 120 մմ – ոց	9	156	2	Չեն հայտնել
82 մմ-ոց	23	2513	30	717 արկ
120 մմ-ոց	12	322	1	5 արկ
Հրաձգային զինատեսակներ	6	-	104	3340
ԱԿ	1	Չեն հայտնել	1	Չեն հայտնել
ՍՎԴ	1	Չեն հայտնել	4	103
ՊԿ	1	Չեն	-	-

		հայտնել		
ՌՊԿ	1	Չեն հայտնել	-	-
«Սև նետ»	1	Չեն հայտնել	2	8
Իստիզլալ	1	Չեն հայտնել	6	294
Իստիզլալ և ՍԿԴ	-	-	6	402
ԴՇԿ	-	-	84	2392
ԴՇԿ և ՈւՏՅՈՍ	-	-	1	141
Ռեակտիվ հրթիռահրետանային կայանք	8	81	14	1183
TR-107	19	254	2	49 արկ
TR-107 և ՄՄ21	-	-	1	270 արկ
ՄՄ21	-	-	2	572 արկ
Ջենիթային համակարգ՝ ՋՈւ-23-2	5	3	5	257 արկ
Ջենիթահրթիռային համալիր՝ 9Մ33 Մ3	-	-	1	Չեն հայտնել
Հետևակի մարտական մեքենա ՀՄՄ	-	-	1	34 արկ
Հակատանկային կառավարվող հրթիռ SPIKE	-	-	1	1 արկ
Թնդանոթներ 85, 100, 122, 152 մմ տրամաչափի	-	-	1	Չեն հայտնել
Դ-30 հաուբից հրանոթ՝ 122 մմ - ng	2	34 արկ	--	-
Զրահատեխնիկա	3	20		
Հրասայլ/տանկ/	3	20		

Հարկ է նշել, որ ԼՂ ՊՆ կողմից տարածած պաշտոնական հաղորդագրություններում մինչ 2016 թ-ի ապրիլ ամիսը հիմնականում նշվել են կիրառված զենքերի տեսակները, սակայն շատ հաճախ չի նշվել կիրառված արկերի քանակը:

Հակառակորդի զինված ուժերը սկսած 2015 թ-ից մինչ 2016 թ-ի ապրիլ ամիսը առավել հաճախ կիրառել է 60 և 82 մմ տրամաչափով ականանետեր և տարբեր տեսակի նռնականետեր: Կիրառվել են նաև տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներ, սակայն ԼՂ ՊՆ պաշտոնական կայքը իր հաղորդագրությունների մեջ հիմնականում չի նշել վերջիններիս տեսակը:

2016 թ. հունիս ամսից սկսած ԼՂ ՊՆ մամուլի ծառայությունը պաշտոնապես հրապարակել է օրվա ընթացքում հրադադարի ռեժիմի խախտումների և արձակված կրակոցների քանակի վերաբերյալ տվյալներ: Հարկ է նշել, որ հուլիս-սեպտեմբեր ամիսների

ընթացքում, հրաձգային տիպի զինատեսակներից, ըստ ԼՂ ՊՆ մամուլի ծառայության կողմից հրապարակված տվյալների, հակառակորդը հրադադարի ռեժիմը խախտել է 2347 անգամ՝ արձակելով 30249 կրակոց: Նշված ժամանակահատվածում հակառակորդը հիմնականում այլ զինատեսակներից կրակոցներ չի արձակել: Ըստ ԼՂ ՊՆ մամուլի ծառայության կողմից հրապարակված տվյալների՝ նույն ժամանակահատվածում հակառակորդը 5 անգամ կրակ է բացել ԴՇԿ հրաձգային տիպի զինատեսակից՝ արձակելով ավելի քան 77 կրակոց:

Նկատենք, որ 2016 թ. ապրիլի 1-ի լույս 2-ի⁸ գիշերը սկսված և 4 օր տևած պատերազմական գործողությունների ժամանակ ադրբեջանական զինուժի կողմից կիրառվեցին այնպիսի զինատեսակներ, որոնք չէին կիրառվել 1994 թ-ի հրադադարի հաստատման պայամանագրի կնքումից ի վեր:

Ի տարբերություն նախորդ տարիների, 2016 թ-ի հունվար⁹ ամսից սկսած հակառակորդը սկսեց կիրառել ռեակտիվ հրթիռահրետանային կայանք TR-107, իսկ նույն տարվա ապրիլ ամսից հակառակորդը կիրառեց նաև ՄՄ21, զենիթային համակարգ՝ ՋՈւ-23-2, զենիթահրթիռային համալիր՝ 9Մ33 Մ3, հետևակի մարտական մեքենա (ՀՄՄ), հակատանկային կառավարվող հրթիռ՝ SPIKE, թնդանոթներ՝ 85, 100, 122, 152 մմ տրամաչափերի:

2016 թ. ապրիլ-հունիս ամիսներին¹⁰ կիրառվել են նաև ռեակտիվ հրթիռային կայանքներ՝ 1183 արկ:

Ըստ վերլուծաբանների՝ հայկական կողմը ռազմական գործողությունների 4 օրերի ընթացքում կրել է 14 մլն դոլարի, իսկ Ադրբեջանը 170 մլն դոլարի նյութական կորուստ:¹¹

1992 թվականից գործող Սովորական սպառազինությունների¹² ՄԱԿ-ի Ռեգիստրում ներառված են սպառազինությունների յոթ կատեգորիաներ, որոնց արտահանման եւ ներմուծման վերաբերյալ տարբեր երկրներ ներկայացնում են իրենց ամենամյա տվյալները: Այդ կատեգորիաներն են՝

1. մարտական տանկեր,
2. մարտական զրահամեքենաներ,
3. մեծ տրամաչափի հրետանի,
4. մարտական ինքնաթիռներ,
5. հարվածային ուղղաթիռներ,

⁸ <http://nkrmil.am/news/view/197>

⁹ <http://nkrmil.am/news/view/286>

¹⁰ <http://nkrmil.am/news/view/127>

¹¹ <http://armtimes.com/hy/read/83128>

¹² <http://unoda-web.s3.amazonaws.com/wp-content/uploads/2013/06/English7.pdf>

6. ռազմանավեր

7. հրթիռներ

Հակառակորդի կողմից 2016 թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում կիրառված զինատեսակները (հրետանի, հրթիռահրետանային կայանք) ներառված են ՄԱԿ-ի սովորական սպառազինությունների ցանկում:

Սովորական սպառազինությունների մասին պայմանագիրը խախտվում է՝ գերազանցելով պայմանագրով սահմանափակված մի շարք տեսակի սպառազինությունների ձեռք բերման քանակը, ինչն էլ ավելացնում է լարվածությունը տարածաշրջանում և վտանգում դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված բանակցային գործընթացը:

2016 թ. ընթացքում մահացության դեպքերով հարուցված քրեական գործերի բաշխումն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների

2016 թ. ընթացքում 162 մահվան դեպքերով, ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հավաքագրած տեղեկատվության, հարուցվել է 60 քրեական գործ: Տեղեկատվության աղբյուր է հանդիսացել ՀՀ Քննչական կոմիտեի պաշտոնական կայքէջը, ինչպես նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված այցերն ու դիմած քաղաքացիների կողմից տրամադրած տեղեկատվությունը: Մյուս 102 դեպքերով քրեական գործերի հարուցման վերաբերյալ որևէ պաշտոնական տեղեկատվություն չի հրապարակվել: *Կազմակերպությունը 2016 թ-ի դեկտեմբերի 22-ին գրությամբ դիմել է ՀՀ գլխավոր դատախազին, ՀՀ քննչական կոմիտեին և ՀՀ Պաշտպանության նախարարին մահացության դեպքերի և դրանցով հարուցված քրեական գործերի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն ստանալու համար: Մինչ այժմ պատասխան ստացվել է միայն ՀՀ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունից, որով հայտնել են, որ 2016 թ-ի ապրիլից ՀՀ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վիճակագրական հաշվառումները փոխանցվել են ՀՀ ռստիկանության ինֆորմացիոն կենտրոն և իրականացվում են այնտեղ: Այս և մյուս հարցումների արդյունքում ստացված տեղեկատվությունը կհրապարակվի լրացուցիչ՝ այն ստանալուց հետո:*

Ստորև ներկայացվում է 2016 թ. ընթացքում տեղի ունեցած միջադեպերի արդյունքում մահվան դեպքերով հարուցված քրեական գործերի որակավորումներն ըստ ՀՀ Քննչական կոմիտեի պաշտոնական կայքէջի տարածած տեղեկատվության: Այսպես, 60 մահվան դեպքերով հարուցված քրեական գործերից՝

- 3-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մաս՝ սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը,
- 6-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,
- 2-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-րդ և 6-րդ կետեր, երկու կամ ավելի անձանց սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով,
- 1-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 13-րդ կետեր, սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ և 110-րդ հոդվածի 1-ին մաս,
- 10-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը,
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մաս՝ Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ
- 6-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ,
- 2-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մաս՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը,
- 5-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 373 հոդվածի 3-րդ մաս՝ զենքի, ռազմամթերքի, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,

- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ՝ եթե անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ,
- 2-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մաս՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,
- 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 384-րդ հոդվածի 2-րդ մաս և 104-րդ հոդված 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետեր,
- 1 դեպքի վերբերյալ ՀՀ Քննչական կոմիտեի կողմից տարածված հայտարարության մեջ չի նշվում, թե որ ՀՀ Քրեական օրենսգրքի որ հոդվածով է հարուցվել քրեական գործը, նշում է միայն, թե անձին, որ հոդվածով է մեղադրանք առաջադրվել,¹³
- 16 դեպքով հարուցվել են քրեական գործեր, սակայն չի նշվում թե ՀՀ քրեական օրենսգրքի, որ հոդվածով:¹⁴

Նշված 60 քրեական գործերից 7-ը հարուցվել է հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացության դեպքերով:

Ըստ 30.06.2016 թ. panarmenian.net լրատվական կայքի տարածած հաղորդագրության¹⁵՝ 2016-ի ապրիլին ռազմական գործողությունների ժամանակ ԼՂՀ Պաշտպանության բանակի զինծառայողների սպանության և նրանց մարմինների խոշտանգումների կապակցությամբ ԼՂ գլխավոր դատախազությունը 6 քրեական գործ է հարուցել:

Մասնավորապես, հարուցված է 3 առանձին քրեական գործ՝ Քյարամ Սլոյանի գլխատման փաստով (գործը հարուցվել է ապրիլի 2-ին), Հրանտ Ղարիբյանի գլխատման գործով (գործը հարուցվել է ապրիլի 2-ին) և Հայկ Թորոյանի գլխատման գործով (գործը հարուցվել է ապրիլի 3-ին):

Հարուցվել են քրեական գործեր Ռաֆիկ Հակոբյանի և Աղասի Ասատրյանի (գործը հարուցվել է ապրիլի 3-ին), Անդրանիկ Չոհրաբյանի և Ռոբերտ Աբաջյանի (գործը հարուցվել է ապրիլի 8-ին) սպանությունների գործով:

Եվս մեկ քրեական գործ է հարուցվել 15 զինծառայողների՝ փոխգնդապետ Ռոման Առաքելյանի, փոխգնդապետ Ալեքսան Առաքելյանի, փոխգնդապետ Օնիկ Գրիգորյանի, մայոր Սուրեն Մելքումյանի, ավագ լեյտենանտ Մաքսիմ Գրիգորյանի, շարքային զինծառայողներ Ժորա Եսայանի, Բագրատ Ալեքսանյանի, Բորիս Օզմանյանի, Գրիգորի

¹³ <http://investigative.am/news/view/hovhannes-harutyunyan-spanutyun-mexadranq.html>

¹⁴ <http://investigative.am/news/view/zincarayox-asoyan-gevorg.html>

¹⁵ <http://panarmenian.net/m/arm/news/215943>

Հարությունյանի, սերժանտ Ադամ Մահակյանի, պայմանագրային զինծառայող շարքային Անդրանիկ Գրիգորյանի, շարքային Տիգրան Բերաքչյանի, շարքային Արման Անդրասյանի, շարքային Ազատ Սիմոնյանի, լեյտենանտ Աշոտ Շահբազյանի մարմինների խոշտանգումների գործով, որոնցից 9-ը շարքայիններ եւ նրանց աջակցելու մեկնած 5 սպաներ, ովքեր հայտնվել էին շրջափակման մեջ եւ մի քանի օր համարվում էին անհայտ կորած: Նույն գործում ներառվել է նաեւ մեկ շարքային զինծառայողի մահվան դեպքը: Գործը հարուցվել է 2016 թ. ապրիլի 10-ին:


2016 թ-ի ընթացքում մահացության ոչ բոլոր դեպքերով է տեղեկատվություն տարածվել քրեական գործերի հարուցման եւ դրանց ընթացքի վերաբերյալ: Հետեւաբար, քանի որ լրատվամիջոցներից եւ պաշտոնական կայքերից հնարավոր չէ գտնել ամբողջական տեղեկատվություն ապրիլից հետո տեղի ունեցած դեպքերով հարուցված քրեական գործերի վերաբերյալ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2016 թ-ի հունիսի 24-ին պաշտոնական գրությամբ տեղեկատվություն է պահանջել ՀՀ պաշտպանության նախարարությունից, սակայն ՀՀ ՊՆ-ից պատասխան գրությամբ մերժել են տեղեկատվություն տրամադրել՝ հղում կատարելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետին, իսկ ՀՀ Քննչական կոմիտեն ընդհանրապես չի տրամադրել պատասխան նշված հարցի վերաբերյալ: Հարկ է նշել, որ զինծառայողների հարազատները հիմնականում եւս տեղեկություն չունեին քրեական գործ հարուցվելու մասին:

2016 թ-ի ընթացքում մահացության դեպքերի վիճակագրական տվյալները և նկարագրությունը

Գծապատկեր 3

2016 թ. ընթացքում մահացած 162 զինծառայողներից 29-ը պայմանագրային զինծառայողներ են, 18-ը՝ կամավորական, 24-ը՝ սպաներ, 91-ը՝ պարտադիր ժամկետային զինծառայողներ:

158 մահվան փաստերի դեպքում առկա է պաշտոնական հաղորդագրություն, և տեղեկատվության տարածման առաջնային աղբյուր հանդիսացել են ԼՂ Պաշտպանության



նախարարության պաշտոնական կայքը¹⁶, ՀՀ Քննչական կոմիտեի պաշտոնական կայքը¹⁷, ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը՝ սոցիալական կայքի միջոցով:

Մահացության դեպքերից 31-ը տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության տարածքում, 131-ը՝ Լեռնային Ղարաբաղի (տե՛ս գծապատկեր 3):

Ստորև ներկայացվում են 2016 թ. մահացության դեպքերի վիճակագրական տվյալներն ըստ պատճառների (տե՛ս աղյուսակ 4), դեպքերի ամփոփ տեղեկատվությունը (տե՛ս աղյուսակ 5) և մահվան հանգամանքների վերաբերյալ առկա տվյալները:

¹⁶ <http://www.nkrmil.am/main/>

¹⁷ <http://investigative.am/home.html>

ՀՀ զինված ուժերում եւ ԼՂ պաշտպանության բանակում 2016 թ-ին մահացության դեպքերի վիճակագրությունը
 րստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրության

Ամիս	Հրադադարի ոեժիմի խախտում	Պատերազմական իրավիճակ ապրիլի 1-5	Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում	Ինքնասպանություն /հասցնել	Ալանի պայթյուն	Սպանություն				Դժբախտ պատահար					Առողջական խնդիրներ	Միջադեպերի քանակը	Ընդամենը	Պաշտոնական հաղորդագրության առկայություն	
						Դիտարկում	Կանոնադրային հարաբերությունների խախտում	Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Դեռևս չճշտված հանգամանքներ	Ավտովթար	Հոսանքահարում	Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնների խախտում	Չեւանոթ	Փրկում					Զրանեղձում
Հունվար	1																1	1	1
Փետրվար	1			2		1											3	4	4
Մարտ	1			3			1	1	4	1							9	11	9
Ապրիլ	17	77	1	2		2	3	1			2	1					29*	106	106
Մայիս	5					1							2		1		8	9	9
Հունիս				1			1							3			4	5	4
Հուլիս	1			1													2	2	2
Օգոստոս				1	1				1								3	3	3
Սեպտեմբեր	2		2					1									5	5	5
Հոկտեմբեր	2			1		1			2						1		7	7	6
Նոյեմբեր	1		1	1													3	3	3
Դեկտեմբեր	3			1					2								3	6	6
Ընդամենը	34	77	4	13	1	2	3	5	3	10	1	2	1	2	3	2	76	162	158

*Ապրիլի 1-5-ը պատերազմական գործողությունները դիտարկվել են որպես մեկ միջադեպ

2016 թ-ին մահացության դեպքերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն

h/h	Անուն, ազգանուն	Զինվորական կոչումը	Դեպքի տարեթիվը	Դեպքի տարածաշրջան	Դեպքի վայրը (քաղաք, գյուղ, հոսպիտալ, ճանապարհահատված...)/ առկայության դեպքում մահվան վայրը (հոսպիտալ ...)	Տեղեկատվության տարածման առաջնային աղբյուրը	Քրեական գործ հարուցող մարմինը	ՀՀ քրեական օրենսգրքի որ հոդվածով	Քրեական գործի պաշտոնական որակումը	Դեպքի պատճառը	Որ փուլում է գտնվում գործը
1.	Արամայիս Ոսկանյան	Շարքային	09.01.2016	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	նախաքնություն
2.	Սիմոն Ռաֆիկի Ճավրջյան	Շարքային	05.02.2016	ԼՂ	ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	նախաքնություն
3.	Դավիթ Վահեի Տերտերյան	Շարքային	18.02.2016	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Ինքնասպանության հասցնել	նախաքնություն
4.	Կամո Արայի Հովհաննիսյան	Կրտսեր սերժանտ	19.02.2016	ԼՂ	ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մաս	Սպանությունը՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Սպանություն/ դիտավորյալ	նախաքնություն
5.	Թեմուր Շարիի Սուլոյան	Շարքային	19.02.2016	ԼՂ	ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Ինքնասպանության հասցնել	նախաքնություն

					տեղամաս		բաժին		նվաստացնելու ճանապարհով անուղղակի դիտավորությամբ անզգուշությամբ ինքնասպանության փորձի հասցնելը		
6.	Կարեն Բշխանի Կարապետյան	Պայմանագրային զինծառայող	09.03.2016	ՀՀ	Եղեգնաձոր-Երևան ավտոճանապարհի Տիգրանաշեն գյուղի հատված	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Արարատի քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3- րդ մաս	Ճանապարհային երթուկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ:	Դժբախտ պատահար/ Ավտովթար	նախաքնն ություն
7.	Վահան Մնացականի Ղուկասյան	Պայմանագրային զինծառայող	09.03.2016	ՀՀ	Եղեգնաձոր-Երևան ավտոճանապարհի Տիգրանաշեն գյուղի հատված	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Արարատի քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3- րդ մաս	Ճանապարհային երթուկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ:	Դժբախտ պատահար/ Ավտովթար	նախաքնն ություն
8.	Ռուսլան Ռաֆայելի Հարությունյան	Պայմանագրային զինծառայող	09.03.2016	ՀՀ	Եղեգնաձոր-Երևան ավտոճանապարհի Տիգրանաշեն գյուղի հատված	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Արարատի քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3- րդ մաս	Ճանապարհային երթուկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ:	Դժբախտ պատահար/ Ավտովթար	նախաքնն ություն
9.	Սարգիս Դավիթի Օհանյան	Շարքային	11.03.2016	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ 1-ին կայագորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1- ին մաս	Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ	Ինքնասպանու թյան հասցնել	նախաքնն ություն

									ինքնասպանության փորձի հասցնելը		
10.	Կամո Վաչիկի Մարտիրոսյան	Շարքային	14.03.2016	ՀՀ	ՀՀ ՊՆ N գործառնախ պահպանության շրջանի մարտական դիրք	Պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳ-Վ 6-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1- ին մաս	Սպանալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզուգուշությամբ կամ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանութ յան հասցնել	նախաքնն ություն
11.	Արսյոմ Արսենի Վարդերեսյան	Շարքային	17.03.2016	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված գործառնախ մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳ-Վ 2-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2- րդ մասի 13- րդ կետ	Սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	նախաքնն ություն
12.	Հովհաննես Ռազմիկի Հարությունյան	Կրտսեր սերժանտ	17.03.2016	ԼՂ	ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված գործառնախ մեկի պահպանության տեղամաս (116 մարտական դիրք)	Պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳ-Վ 2-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 373 հոդվածի 3-րդ մաս	Ձենքի, ռազմամթերքի, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզուգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Սպանություն / Ձենքի հետ վարվելու կանոնների խախտում	նախաքնն ություն
13.	Արսեն Հովսեփյան	Շարքային	23.03.2016	ՀՀ	Արարատի մարզի Սայաթ-Նովա գյուղի խաչմերուկի ճանապարհահատված	Ոչ պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչություն	ՀՀ Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3- րդ մաս	Ճանապարհային երթնեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզուգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ:	Դժբախտ պատահար/ Ավտովթար	նախաքնն ություն
14.	Սևակ Հովհաննեսի Համբարձումյան	Շարքային	24.03.2016	ՀՀ	Կապան քաղաքի գործառնախ հրաձգարան	Պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳ-Վ 9-րդ	Մեղադրանք է առաջադրվե	Պետի (հրամանատարի) կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը	Սպանություն/ դեռևս չհատկեցված	նախաքնն ություն

					(Կապանի քաղաքային հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին)		կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մաս և 360-րդ հոդվածի 2-րդ մաս	կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, ինչպես նաև իշխանության անգործությունը, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից էլնելով, և եթե դրանք էական վնաս են պատճառել	հանգամանքներ	
15.	Մեսրոպ Ղուրշուդյան	Կապիտա ն / ծառայությ ունից դուրս	29.03.2016	ՀՀ	Արմավիր քաղաքի Գորկու փողոցի 5-րդ նրբանցքի տներից մեկ իր տան լոգարանում	Ոչ պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչություն	ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ կամ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանութ յան հասցնել	նախաքնն ություն
16.	Սարգիս Սմբատի Մանուկյան	Շարքային	30.03.2016	ՀՀ	ՊՆ N գորմասի 4-րդ պահակակետի տարածքում գտնվող էլեկտրական կայանի ներսում	Ոչ պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի ԶԶԳՎ 8-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս	անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ՝ եթե անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ	Դժբախտ պատահար /Շոսանքահարո սմ	նախաքնն ություն
17.	Վլադիմիր Աշոտի Մելքոնյան	Շարքային	01.04.2016	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի ԶԶԳՎ 3-րդ կայազորային քննչական բաժնում	ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	նախաքնն ություն

18.	Գևորգ Արմենի Ասոյան	Շարքային	01.04.2016	ՀՀ	ՀՀ ՊՆ Իջևանի N գորամասի մարտական դիրքում	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժին	Մեղադրանք է առաջադրվել նույն գորամասի մեկ այլ զինծառայող , շարքային Մ.Մելիքյան ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով (3 դրվագ):	Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին վիրավորանք հասցնելը՝ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելը մեկ այլ զինծառայողի կողմից	Մպանություն/ դեռևս չհատակեցված հանգամանքներ	նախաքննություն
19.	Նոդարիկ Արտաշի Մարգարյան	Պայմանագրային / էֆրեյտոր	02.04.2016	ԼՂ	Մատաղիս	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
20.	Հրանտ Սամվելի Ղարիբյան	Պայմանագրային / շարքային	02.04.2016	ԼՂ	Մատաղիս	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
21.	Մերուժան Արթուրի Ստեփանյան	Ավագ լեյտենանտ	02.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
22.	Վիկտոր Ալեքսանդրի Յուզիխովիչ	Շարքային	03.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	

23.	Մասուն Ֆահրադի Մկրտչյան	Պայմանագրային/ շարքային	02.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
24.	Ռաֆիկ Խլղաթի Հակոբյան	Շարքային	02.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
25.	Հովսեփ Գեղամի Կիրակոսյան	Կապիտան	02.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
26.	Արմենակ Մերսի Ուրֆանյան	Կապիտան	02.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
27.	Ռոբերտ Ալեքսանդրի Աբաջյան	Կրտսեր սերժանտ	02.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
28.	Քյարամ Քալայի Սլոյան	Շարքային	02.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	

29.	Անդրանիկ Ատոմի Զոհրաբյան	Շարքային	02.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնական					Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողությունն ապրիլի 1-5	
30.	Արման Սեյրանի Անդրասյան	Սերժանտ	02.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 1 04-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետեր	Սպանությունը մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողությունն ապրիլի 1-5		
31.	Ալեքսան Գևորգի Առաքելյան	Փոխգնդապետ	02.04.2016	ԼՂ	Զաբրայիլ	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 1 04-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետեր	Սպանությունը մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողությունն ապրիլի 1-5		
32.	Աշոտ Կարապետի Շահբազյան	Լեյտենանտ	02.04.2016	ԼՂ	Զաբրայիլ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողությունն ապրիլի 1-5		
33.	Նորիկ Զավենի Սարգսյան	Շարքային	02.04.2016	ԼՂ	Զաբրայիլ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողությունն ապրիլի 1-5		
34.	Գրիգոր Գևորգի Հարությունյան	Շարքային	02.04.2016	ԼՂ	Զաբրայիլ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողությունն ապրիլի 1-5		

35.	Տիգրան Էդուարդի Բերակչյան	Շարքային	02.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
36.	Ադամ Խաչատուրի Սահակյան	Սերժանտ	02.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
37.	Բագրատ Արթուրի Ալեքսանյան	Շարքային	02.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
38.	Սաշա Վաչագանի Գալստյան	Կրտսեր սերժանտ	02.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
39.	Բորիս Ռաֆիկի Օզմանյան	Շարքային	02.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
40.	Ժորա Արթուրի Եսայան	Շարքային	02.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	

41.	Վահե Սամվելի Ջաքարյան	Շարքային	02.04.2016	ԼՂ	Ջաքարայիլ	Պաշտոնական					Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
42.	Արթուր Գառնիկի Գևորգյան	Շարքային	02.04.2016	ԼՂ	Ջաքարայիլ	Պաշտոնական					Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
43.	Ազատ Քաջիկի Սիմոնյան	Շարքային	02.04.2016	ԼՂ	Ջաքարայիլ	Պաշտոնական					Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
44.	Կարեն Արտակի Ներսիսյան	Սերժանտ	02.04.2016	ԼՂ	Ջաքարայիլ	Պաշտոնական					Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
45.	Մաքսիմ Վազիֆի Գրիգորյան	Ավագ լեյտենանտ	02.04.2016	ԼՂ	Ջաքարայիլ	Պաշտոնական					Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
46.	Ռոման Վլադիմիրի Պողոսյան	Փոխգնդապետ	02.04.2016	ԼՂ	Ջաքարայիլ	Պաշտոնական					Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	

47.	Սուրեն Գրիգորիի /Գրիշայի/ Մելքունյան	Մայրր	02.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան					Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
48.	Օնիկ Կարոյի Գրիգորյան	Փոխգնդա պետ	02.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան					Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
49.	Յուրի Անատոլիի Փարամազյան	Սերժանտ	02.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան					Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
50.	Հայկ Ռոդիկի Գրիգորյան	Լեյտենան տ	02.04.2016	ԼՂ	Մարտունի	Պաշտոնա կան					Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
51.	Հրաչ Վարդանի Գալստյան	Ավագ լեյտենան տ	03.04.2016	ԼՂ	Մարտունի	Պաշտոնա կան					Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
52.	Գագիկ Սուրիկի Մելքունյան	Պայմանա գրային / ենթասպա	03.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնա կան					Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	

53.	Ռուբեն Աշոտի Իսկանդարյան	Կրտսեր սերժանտ	03.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
54.	Աղասի Սարսենի Ասատրյան	Շարքային	03.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
55.	Գեղամ Ռաշիդի Մկրտչյան	Պայմանագրային/ շարքային	03.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
56.	Հայկ Վահանի Թորոյան	Մայր	03.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
57.	Բենիամին Ներսեսի Եղոյան	Ավագ լեյտենանտ	03.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
58.	Տիգրան Արամի Աբգարյան	Շարքային	03.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	

59.	Վլադիմիր Վարուժանի Ալիխանյան	Շարքային	03.04.2016	ԼՂ	Զաբրայիլ	Պաշտոնական					Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
60.	Արտակ Այգավարդի Պետրոսյան	Շարքային	04.04.2016	ԼՂ	Մատաղիս	Պաշտոնական					Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
61.	Դավիթ Ռազմիկի Հայրապետյան	Շարքային	04.04.2016	ԼՂ	Մատաղիս	Պաշտոնական					Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
62.	Միշա Կամոյի Աղաջանյան	Շարքային	04.04.2016	ԼՂ	Մատաղիս	Պաշտոնական					Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
63.	Արգիշտի Արծվիի Գաբրյան	Կապիտան	04.04.2016	ԼՂ	Մատաղիս	Պաշտոնական					Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
64.	Գևորգ Գագիկի Վարդանյան	Շարքային	04.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական					Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	

65.	Վրեժ Վարդանի Սարգսյան	Պայմանագրային / շարքային	04.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
66.	Հարություն Հովհաննեսի Աբրահամյան	Պայմանագրային/ շարքային	04.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
67.	Սարգիս Արմենակի Սահակյան	Շարքային	04.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
68.	Սարգիս Լազրի Խալաֆյան	Կամավոր ական	04.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
69.	Մայիս Երջանիկի Միրզոյան	Կամավոր ական	04.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
70.	Էդուարդ Յուրիկի Ալեքսանյան	Կամավոր ական	04.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	

71.	Արմեն Մինասի Բեգլարյան	Կամավոր ական	04.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում/ Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
72.	Սերգեյ Գուրգենի Դանդյան	Կամավոր ական	04.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
73.	Եղիշե Արտավազդի Նիկայան	Կամավոր ական	04.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
74.	Դավիթ Բագրատի Սարգսյան	Կամավոր ական	04.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
75.	Սեդրակ Սերգեյի Ասրյան	Կամավոր ական	04.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
76.	Կարո Ծերունիի Համբարձումյան	Կամավոր ական	04.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	

77.	Արմեն Արեգի Հովհաննիսյան	Կամավոր ական	04.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնա կան				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
78.	Վարդան Սուրիկի Թադևոսյան	Պայմանա գրային/ շարքային	04.04.2016	ԼՂ	Մարտակերտ	Պաշտոնա կան				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
79.	Արամ Արայիկի Աբրահամյան	Շարքային	04.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
80.	Արամայիս Գրիգորի Միքայելյան	Շարքային	04.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
81.	Նվեր Սարոյի Սիմոնյա ն	Պայմանա գրային / ավագ սերժանտ	04.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	
82.	Ազնաուր Ռաֆիկի Բալայա ն	Պայմանա գրային / շարքային	04.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմակ ան գործողություն ապրիլի 1-5	

83.	Դավիթ Յուրիի Գասպարյան	Ավագ ենթասպա	04.04.2016	ԼՂ		Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
84.	Հովսեփ Ռաֆայելի Մայիլյան	Մայոր	04.04.2016	ԼՂ	Հաղթության շքանշան	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
85.	Ռուդիկ Բախշիի Մովսեսյան	Մայոր	04.04.2016	ԼՂ		Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
86.	Գագիկ Կոլյայի Փարսադանյան	ԿԱՄԱՎՈ ԸՄԿԱՆ	04.04.2016	ԼՂ		Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
87.	Կարեն Պարզի Դավթյան	Պայմանագրային/ շարքային	05.04.2016	ԼՂ	Քարվաճառ	Ոչ պաշտոնական				Դժբախտ պատահար/ Չնահուսք	
88.	Գոռ Կարապետի Կիրակոսյան	Շարքային	05.04.2016	ԼՂ	Մատաղիս	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
89.	Նորայր Միքայելի Հաջիյան	ԿԱՄԱՎՈ ԸՄԿԱՆ	05.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	

90.	Վլադիմիր Ստեփանի Նարինյան	Կրտսեր սերժանտ	05.04.2016	ԼՂ		Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
91.	Հենրիկ Ռուդոլֆի Ղահրամանյան	Կրտսեր սերժանտ	03-06.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
92.	Նարեկ Վարդանի Մկրտչյան	Շարքային	02-05.04.2016	ԼՂ	ԼՂ հարավային սահման	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
93.	Նորիկ Ժորայի Գասպարյան	Սերժանտ	02-05.04.2016	ԼՂ		Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
94.	Մասիս Միքայելի Թովմասյան	Կամավոր ական	02-05.04.2016	ԼՂ		Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	
95.	Անդրանիկ Մարատի Գրիգորյան	Պայմանագրային / շարքային	02-05.04.2016	ԼՂ	Հաղրութի շրջանի մարտական հենակետ	Պաշտոնական				Հրադադարի նեժիմի խախտում /Պատերազմական գործողություն ապրիլի 1-5	

96.	Ղարիբ Հայասերի Սահակյան	Պայմանագրային / ավագ սերժանտ	02-05.04.2016	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական սահմանագոտու հարավային ուղղություն	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում /Պատերազմական գործողությունն ապրիլի 1-5	
97.	Նիկոլայ Սարգսի Հոսեփյան	Կամավորական	06.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	
98.	Արմեն Կառլենի Գասպարյան	Պայմանագրային զինծառայող / պահեստագործի ավագ լեյտենանտ	06.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	
99.	Մհեր Արամայիսի Երզնկյան	Շարքային	06.04.2016	ՀՀ	Ճամբարակի գորամասի սննդի պահեստի տարածքում	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	
100.	Գրիգոր Հերմոնի Ավետիսյան	Շարքային	06.04.2016	ԼՂ	Քարվաճառ	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 5-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետեր	Երկու կամ ավելի անձանց սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով	Սպանություն/ Կանոնադրային հարաբերությունների խախտում	Նախաքննություն
101.	Սուրեն Արթուրի Արամյան	Շարքային	06.04.2016	ՀՀ	Քարվաճառ	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 5-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետեր	Երկու կամ ավելի անձանց սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով	Սպանություն/ Կանոնադրային հարաբերությունների խախտում	Նախաքննություն

102.	Գևորգ Աշոտի Մղղեայան	Շարքային	07.04.2016	ԼՂ	Առաջնագծի հյուսիսարևելյան հատված	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մաս	Զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Սպանություն / Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Նախաքննություն
103.	Հրայր Սամվելի Մուրադյան	Պայմանագրային	07.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	
104.	Մուրեն Սիսակի Ճարատանյան	Կամավորական	08.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	
105.	Վարդան Լևիկի Մաթևոսյան	Պայմանագրային	08.04.2016	ԼՂ	Արարատի մարզի Արմաշ գյուղ տանող ավտոճանապարհ	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 8-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մաս	Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար/ Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնների խախտում	նախաքննություն
106.	Ռոբերտ Աբրահամի Աբրահամյան	Պայմանագրային	10.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական	ՀՀ Քննչական կոմիտեի ՋԲԳՎ 3-րդ կայազորային քննչական բաժն	ՀՀ Քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մաս	Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը	Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում	
107.	Գառնիկ Համլետի Ավետիսյան	Շարքային	11.04.2016	ՀՀ	Դիլիջանի բժշկական կենտրոն տեղափոխվելու ճանապարհին	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մաս	Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար/ Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնների խախտում	Նախաքննություն
108.	Սևակ Նորայրի Խաչատրյան	Շարքային	12.04.2016	ԼՂ	Կուբաթլուի զորամասի կենտրոնացման շրջանում	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ	Ինքնասպանության հասցնել	Նախաքննություն

									անզուտությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը		
109.	Մանվել Արմենի Գևորգյան	Շարքային	14.04.2016	ԼՂ	Մարտունու ուղղության մարտական դիրք	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում	
110.	Համլետ Այվազի Հաջոյան	Պայմանա գրային	14.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում	
111.	Գևորգ Գարեգինի Գևորգյան	Շարքային	19.04.2016	ԼՂ	Ջաբրայիլի պահպանության մարտական հենակետ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում	
112.	Մարատ Ռաֆայելի Դանիելյան	Կամավոր ական	21.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում	
113.	Օնիկ Ալբերտի Սահակյան	Կամավոր ական	21.04.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնա կան				Հրադադարի ռեժիմի խախտում	
114.	Սպարտակ Դավիթի Քալաշյան	Շարքային	21.04.2016	ԼՂ	Մարտունի գորամասի մարտական դիրք	3 Պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3- րդ մաս	Չենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկանների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզուտությամբ առաջացրել է մարդու մահ	Սպանություն / Չենքի հետ վարվելու կանոնների խախտում	Նախաքնն ություն
115.	Կարեն Արտյուշի Աղաբեկյան	Շարքային	21.04.2016	ՀՀ	N գորամասի «ՈւԱԶ» մականիշի ավտոմեքենայի ավտոխցիկում	Պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 1-ին կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3- րդ մաս	Չենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկանների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզուտությամբ առաջացրել է մարդու մահ	Սպանություն / Չենքի հետ վարվելու կանոնների խախտում	Նախաքնն ություն

116.	Հովհաննես Վաչիկի Պետրոսյան	Շարքային	25.04.2016	ՀՀ	ՀՀ ՊՆ Իջևանի զորամասի կրակային դիրքում՝ «ԳԱԶ 66» մակնիշի զինհամարանիշի կունգի թափքում	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անուղղակի դիտավորությամբ անզգուշությամբ ինքնասպանության ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանության հասցնել	Նախաքննություն
117.	Արամ Նիկոլայի Առուշանյան	Փոխգնդապետ	26.04.2016	ԼՂ	Ղարաբաղադրբեջանական հակամարտ ուժերի շփման գծում Մատաղիսի ուղղությամբ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	
118.	Տիգրան Մխիթարի Պողոսյան	Լեյտենանտ	26.04.2016	ԼՂ	Մարտակերտի զորամասի պահպանության տակ գտնվող մարտական դիրք	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	
119.	Հայկ Սամվելի Մինասյան	Շարքային	26.04.2016	ԼՂ	Ղարաբաղադրբեջանական սահմանագոտու հյուսիսարևելյան ուղղություն	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ 3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 13-րդ կետեր	Սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
120.	Գարիկ Մնացականի Մովսիսյան	Կրտսեր սերժանտ	30.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	
121.	Վազգեն Հենրիկի Հարությունյան	Կամավորական	30.04.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	
122.	Աշոտ Շավարշի Զոհրաբյան	Ավագ լեյտենանտ	30.04.2016	ԼՂ	Մարտունու մարտական հենակետերից մեկ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	
123.	Սարգիս Արթուրի Գասպարյան	Կամավորական	02.05.2016	ԼՂ	Թալիշ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	

124.	Կորյուն Կամոյի Հարությունյան	Շարքային	03.05.2016	ԼՂ	Ջաբրայիլի զորամասի պահպանության տակ գտնվող մարտական դիրքի բլինդաժամ	Պաշտոնական	Հաղորդի կայագրային քննչական բաժին			Դժբախտ պատահար/ Փլուզում	
125.	Իգոր Պապի Հակոբյան	Շարքային	03.05.2016	ԼՂ	Ջաբրայիլի զորամասի պահպանության տակ գտնվող մարտական դիրքի բլինդաժամ	Պաշտոնական	Հաղորդի կայագրային քննչական բաժին			Դժբախտ պատահար/ Փլուզում	
126.	Արմեն Հրայրի Մարտիրոսյան	Շարքային	11.05.2016	ԼՂ	Մատաղիսի զորամասի պահպանության տեղամաս	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	
127.	Արամ Վաղինակի Օհանյան	Պայմանագրային, ավագ սերժանտ	14.05.2016	ՀՀ	Վայքի սահմանապահ մարտական դիրք	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 8-րդ կայագրային քննչական բաժնի	ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
128.	Խաչատուր Վարդանի Հարությունյան	Կրտսեր սերժանտ	17.05.2016	ԼՂ	Ջաբրայիլ	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	
129.	Հակոբ Արայիկի Գևորգյան	Սերժանտ	25.05.2016	ՀՀ	ՀՀ ՊՆ Սյունիքի մարզի N զորամասի բուժկետ	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 9-րդ կայագրային քննչական բաժնի	ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մաս	Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը	Սպանություն/ Կանոնադրային հարաբերությունների խախտում	նախաքննություն
130.	Եղոյան Վահե Արզամի	Շարքային	25.05.2016	ԼՂ	Մատաղիսի զորամասի պահպանության շրջանի մարտական դիրք	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 3-րդ կայագրային քննչական բաժնի	ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետ	Սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
131.	Մուրեն Արմենի Մոսիսյան	Շարքային	29.05.2016	ԼՂ	ՊԲ Հաղորդի զորամասերից մեկի կրակային դիրք	Պաշտոնական				Առողջական / Սրտի Կաթված	

132.	Խորեն Դերենիկի Հարությունյան	Կրտսեր սերժանտ	02.06.2016	ԼՂ	Հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մաս	Զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Սպանություն / Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Նախաքննություն
133.	Արմեն Պավելի Գազարյան	Շարքային	08.06.2016	ԼՂ	Զաբրայիլի մարտական դիրք	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժին			Դժբախտ պատահար /Զրհեղեղ	Նախաքննություն
134.	Վարդան Կարապետի Դրմաշյան	Կրտսեր սերժանտ	08.06.2016	ԼՂ	Զաբրայիլի մարտական դիրք	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժին			Դժբախտ պատահար /Զրհեղեղ	Նախաքննություն
135.	Հրանտ Գարուշի Գրիգորյան	Շարքային	17.06.2016	ԼՂ	Հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի մարզումների անցկացման վայր	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 2-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպանության, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ կամ հինքնասպանության կամ հինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանության հասցնել	Նախաքննություն
136.	Էդգար Չախյան	Շարքային	29.06.2016	ՀՀ	Երևան	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի Երևանի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին			Դժբախտ պատահար/ Զրահեղձում	Նախաքննություն

137.	Արսեն Արթուրի Մխիթարյան	Շարքային	03.07.2016	ՀՀ	Տավուշի մարզ, Շամշադին	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳ-Վ 6-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մաս		Ինքնասպանության հասցնել	Նախաքննություն
138.	Արսեն Արայիկի Առաքելյան	Շարքային	23.07.2016	ԼՂ	ՊԲ հարավ-արևելյան ուղղությամբ տեղակայված զորամաս	Պաշտոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	
139.	Գևորգ Արթուրի Հարությունյան	Շարքային	02.08.2016	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամաս	Պաշտոնական				Ականհի պայթյուն	
140.	Վահան Վահեի Միքայելյան	Կրտսեր սերժանտ	04.08.2016	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամաս	Պաշտոնական	Զինվորական քննչական գլխավոր վարչության 3-րդ կայազորային քննչական բաժին			Ինքնասպանություն	Նախաքննություն
141.	Դավիթ Աշոտի Սաֆարյան	Շարքային	05.08.2016	ՀՀ	ՀՀ, ոլորաններ	Ոչ պաշտոնական	Հայաստանի ՔԿ ՋԲԳ-Վ 6-րդ կայազորային քննչական բաժին			Դժբախտ պատահար, Ավտովթար	Նախաքննություն
142.	Արայիկ Սամվելի Օրդուբեկյան	Շարքային	03.09.2016	ԼՂ	ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնական	Զինվորական քննչական գլխավոր վարչության 2-րդ կայազորային քննչական բաժին		Մպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/անհայտ պայմաններ	Նախաքննություն
143.	Գեղամ Ալբերտի Եղիազարյան	Ենթասպա	05.09.2016	ՀՀ	ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրք տանող ճանապարհը կրճատող ժայռի տակ՝ քարափի մեջ	Ոչ պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳ-Վ 8-րդ կայազորային քննչական բաժին			Նախնական տվյալներով սպանություն, սակայն ՀՀ քննչական կոմիտեն դեռևս պաշտոնական որակում չի տվել	Նախաքննություն

144.	Արման Ալիկի Ղանդիլյան	Շարքային	07.09.2016	ԼՂ	ՊԲ հյուսիս-արևելյան ուղղությամբ տեղակայված գործամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնա կան	ԶԲԳՎ 3-րդ կայազորային քննչական բաժին			մարտական հերթապահությ ան կրման կանոնների խախտման արդյունքում	Նախաքնն ույուն
145.	Նարեկ Գառնիկի Փաթաթանյան	Շարքային	16.09.2016	ԼՂ	ՊԲ կենտրոնական ենթակայության գործամասերից մեկում	Պաշտոնա կան	1-ին կայազորային քննչական բաժին			մարտական հերթապահությ ան կրման կանոնների խախտման արդյունքում	Նախաքնն ույուն
146.	Սևակ Հովհաննեսի Խաչատրյան	Շարքային	25.09.2016	ԼՂ	ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված գործամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրք	Պաշտոնա կան	Զինվորական քննչական գլխավոր վարչության 2- րդ կայազորային քննչական բաժին		Սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքնն ություն
147.	Վաչագան Հայրապետյան	Պայմանա գրային, կապիտան	10.10.2016	ՀՀ	Երևան-Սևան-Իջևան ավտոճանապարհի 120-րդ կ/մ հատված	Պաշտոնա կան	Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2- րդ մասով	Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզուգույնությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար/ավ տովթար	Նախաքնն ություն
148.	Մանասար Մավրիկի Գրիգորյան	Պայմանա գրային	11.10.2016	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված գործամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնա կան	1-ին կայազորային քննչական բաժին		Սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքնն ություն
149.	Վահագն Գազիկի Վիրաբյան	շարքային	15.10.2016	ԼՂ	Հակամարտ գորքերի շփման գծի հարավային ուղղությամբ տեղակայված գործամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնա կան	Զինվորական քննչական գլխավոր վարչության 2- րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1- ին մաս	Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը	Սպանություն/դ իտավորյալ	Նախաքնն ություն
150.	Գուրգեն Ավետիքի Այվազյան	շարքային	26.10.201 6	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ ռտեղակայված գործամասերից մեկի	Պաշտոնա կան	2-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-	Սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքնն ություն

					պահպանության տեղամաս			րդ մասի 13-րդ կետ	մոլեռանդության շարժառիթով		
151.	Դավիթ Վարդանյան	շարքային	27.10.2016	ՀՀ	Արարատի մարզ	Ոչ պաշտոնական	ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության Արարատի քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մաս	Ճանապարհային երթուղիների և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար/ավտովթար	Նախաքննություն
152.	Դերենիկ Արտակի Խալխալյան	պայմանագրային	30.10.2016	ՀՀ	Տավուշի մարզի դիրքերից մեկում	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋՔԳՎ 6-րդ կայագրային քննչական բաժին			Առողջական/սրտի կանգ	Նախաքննություն
153.	Մ. Հարությունյան	զինծառայող/ենթասպա	31.10.2016	ՀՀ	Վանաձոր	Ոչ պատոնական				Ինքնասպանություն	
154.	Իվան Դավիթի Հայրապետյան	պայմանագրային	17.11.2016	ՀՀ	Տավուշի մարզի գորամասերից մեկը	Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի ՋՔԳՎ 6-րդ կայագրային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպանալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն	Նախաքննություն
155.	Նարեկ Վլադիկի Ասատրյան	շարքային	29.11.2016	ՀՀ	Զինծառայողը վիրավորվել է մահվանից 6 ամիս առաջ Մատաղիսում, մահացել է ՀՀ ՊՆ կենտրոնական զինվորական հոսպիտալում	Ոչ պատոնական				Հրադադարի ռեժիմի խախտում	

156.	Վարդան Հովհաննեսի Առաքելյան	շարքային	13.11.201 6	ԼՂ	ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնա կան	Զինվորական քննչական զխավոր վարչության 2- րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3- րդ մաս	Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը	Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում	Նախաքնն ություն
157.	Ալբերտ Հակոբի Պոստոլոյան	շարքային	08.12.201 6	ԼՂ	Հյուսիսարևելյան /Մարտակերտ/ ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնա կան	3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2- րդ մասի 1- ին կետով և 110-րդ հոդվածի 1- ին մաս		Ինքնասպանու թյուն	Նախաքնն ություն
158.	Արմեն Վեամիրի Մուսիկյան	պայմանա գրային զինծառայ ող, ավագ վարորդ, լեյտենան տ	08.12.201 6	ՀՀ	Երևան-Գորիս ճանապարհի 231,3-րդ կմ-ում	Պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3- րդ մաս		Դժբախտ պատահար/ավ տովթար	Նախաքնն ություն
159.	Ալեքսան Լվերի Միմոնյան	անվտանգ ության աշխատակ ից, ավագ սպա, կապիտան	08.12.201 6	ՀՀ	Երևան-Գորիս ճանապարհի 231,3-րդ կմ-ում	Պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3- րդ մաս		Դժբախտ պատահար/ավ տովթար	Նախաքնն ություն
160.	Շավարշ Մելիքսեթի Մելիքյան	լեյտենան տ	29.12.201 6	ՀՀ	ՀՀ Տավուշի մարզի՝ Չինարի գյուղից դեպի հարավ-արևելք ընկած պետական սահմանի հատված	Պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժն	ՀՀ քրեական օրենսգրքի 384-րդ հոդվածի 2- րդ մասով և 104-րդ հոդված 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետերով		Հրադադարի ռեժիմի խախտում/ դիվերսիոն ներթափանցում	Նախաքնն ություն
161.	Էդգար Գրիգորի Նարայան	շարքային	29.12.201 6	ՀՀ	ՀՀ Տավուշի մարզի՝ Չինարի գյուղից դեպի հարավ-արևելք ընկած պետական սահմանի հատված	Պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժն	ՀՀ քրեական օրենսգրքի 384-րդ հոդվածի 2- րդ մասով և 104-րդ		Հրադադարի ռեժիմի խախտում/ դիվերսիոն ներթափանցում	Նախաքնն ություն

								հոդված 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետերով			
162.	Էրիկ Գարիկի Աբովյան	շարքային	29.12.201 6	ՀՀ	ՀՀ Տավուշի մարզի՝ Չինարի գյուղից դեպի հարավ-արևելք ընկած պետական սահմանի հատված	Պաշտոնա կան	ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 6-րդ կայազորային քննչական բաժնի	ՀՀ քրեական օրենսգրքի 384-րդ հոդվածի 2- րդ մասով և 104-րդ հոդված 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետերով		Հրադադարի ռեժիմի խախտում/ դիվերսիոն ներթափանցում	Նախաքնն ույթյուն

**2016 Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ա. Հրադադարի ռեժիմի խախտում

1. Արամայիս Յուրիկի Ոսկանյան

2016 թ-ի հունվարի 9-ին ժամը 21:30-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից արձակված կրակոցից, մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 1996թ. ծնված Արամայիս Յուրիկի Ոսկանյանը¹⁸:

Զինվորական քննչական գլխավոր վարչության առաջին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ¹⁹:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով ԼՂՀ պաշտպանության բանակի N զորամասի շարքային Արամայիս Ոսկանյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով²⁰:

2. Միմոն Ռաֆիկի Ճավրջյան

2016 թ-ի փետրվարի 5-ի գիշերը ժամը 03.55-ի սահմաններում ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 1996թ. ծնված Միմոն Ռաֆիկի Ճավրջյանը²¹:

Զինծառայողը Շիրակի մարզի Փանիկ գյուղից էր և զարնանը պիտի գորացրվեր: Գյուղապետի փոխանցմամբ նրա ընտանիքը գտնվում է նյութապես շատ ծանր վիճակում, հայրը և ավագ եղբայրը արտագնա աշխատող են²²:

¹⁸ http://www.forrights.am/?ln=1&id=10&page_id=401

¹⁹ <http://investigative.am/news/view/zinvori-mah-hakarakord.html>

²⁰ <http://www.lragir.am/index/arm/0/country/view/126028>

²¹ <http://news.am/arm/news/309976.html>

²² <http://hraparak.am/?p=101702&l=am/zohvac+zincarayoxi+hayrnvo%D6%82+exbayrn+artagna+ashxatanqi+mej+en+manramasner>

Շարքային Սիմոն Ռաֆիկի Ճավրշյանի սպանության դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնում՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:²³

Փետրվարի 5-ին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով Սիմոն Ճավրշյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար:²⁴

3. Արտյոմ Արսենի Վարդերեսյան

*2016 թ-ի մարտի 17-ին՝ ժամը 14:55-ի սահմաններում, ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից արձակված կրակոցից, մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 1996 թ. ծնված Արտյոմ Արսենի Վարդերեսյանը:*²⁵

Երրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ, կատարվում է նախաքննություն:²⁶

4. Վլադիմիր Աշոտի Մելքոնյան

Ապրիլի 1-ին՝ ժամը 12:20-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կրակոցից զոհվել է ՊԲ զինծառայող, 1996թ. ծնված Վլադիմիր Աշոտի Մելքոնյանը:

Զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ հակառակորդի կողմից պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Վլադիմիր Աշոտի Մելքոնյանի սպանության դեպքի առթիվ:²⁷

Բակո Սահակյանի՝ ապրիլի 1-ին ստորագրած հրամանագրով՝ հայկական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար Պաշտպանության

²³ <http://investigative.am/news/view/zincarayox-chavroshyan.html>

²⁴ <http://www.azatutyun.am/archive/news/20160205/2031/2031.html?id=27533801>

²⁵ <http://www.azatutyun.am/archive/news/20160317/2031/2031.html?id=27619371>

²⁶ <http://investigative.am/news/view/artiom-varderesyan.html>

²⁷ <http://investigative.am/news/view/zincarayox-vladimir-melqonyan.html>

բանակի զինճառայող Վլադիմիր Մելքոնյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:²⁸

5. Երզնկյան Մհեր Արամայիսի

Մհեր Արամայիսի Երզնկյանը մահացու հրազենային վիրավորում է ստացել ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը Ճամբարակի զորամասի հսկողության տակ գտնվող սննդի պահեստին հարակից տարածքում, դիվերսիոն հարձակման ժամանակ:²⁹

Մհեր Երզնկյանը ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը, ժամը 4-ի սահմաններում, զորամասի սննդի պահեստի մոտ հսկողություն իրականացնելու ժամանակ շարժ է նկատել, մոտեցել է կապի խցիկին և հաղորդել այդ մասին: Իրեն ասել են՝ ուշադիր լինի, անհրաժեշտության դեպքում կրակ բացի, մինչև հասնեն: Մինչ հսկողություն իրականացնող մյուս զինվորները հասել են դեպքի վայր, փոխհրաձգության ձայներ են լսել, Մհերը արդեն մահացու վիրավորված է եղել: Սևանի քննչական մարմնի ներկայացուցիչները իրականացնելով դեպքի վայրի և դիակի գնություն՝ նախնական քրեական գործ են հարուցել «Ինքնավնասում» հոդվածով: Դեպքի մասին հարազատներին հայտնելիս ասել են, որ Մհերը ինքնասպանություն է գործել: Ապրիլի 7-ին դիագնոստիկական ժամանակ ներկա է եղել նաև հայրը: Փորձաքննության ժամանակ արձանագրվել է գլխին՝ ականջի հետևի մասում ստացած 2-րդ հրազենային վիրավորումը: Բժիշկ-փորձագետները բացառել են ինքնավնասման մասին նախնական վարկածը: Քննիչը հայտնել է, որ ամբողջական փորձաքննություն անցկացնելուց հետո քրեական գործը կփոխվի:

Քրեական գործը քննվում է ՀՀ Քննչական կոմիտեի ԶԲԳՎ Սևանի քննչական կոմիտեում:

6. Նիկոլայ Սարգսի Հովսեփյան

2016 թ. ապրիլի 6-ին Ջաբրայիլի մարտական հենակետում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով զոհվել է 1953թ ծնված կամավորական Նիկոլայ Սարգսի Հովսեփյանը:³⁰

²⁸ <http://razm.info/81504>

²⁹ <http://hetq.am/arm/news/68248/im-ordin-aryutsabar-krvelov-vastakec-aryuts-mher-kochvelu-iravunqy.html>

³⁰ <http://operativ.am/?p=166644&l=am>

Արցախյան ազատամարտի ազատամարտիկ Նիկոլայ Հովսեփյանը որպես կամավորական Ջաբրայիլի պաշտպանական դիրքեր է մեկնել ապրիլի 2-ին: Մահացել է ապրիլի 6-ին, մարմինը ընտանիքին են հանձնել ապրիլի 8-ին:

7. Հրաչյա Մամվելի Մուրադյան

Պայմանագրային զինծառայող, շարքային Հրաչյա Մամվելի Մուրադյանը զոհվել է 2016 թ. ապրիլի 7-ին Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում:

Ապրիլի 7-ի լույս 8-ի գիշերը դարաբաղա-ադրբեջանական հակամարտ գորքերի շփման գծի ողջ երկայնքով խախտվել է կրակի դադարեցման շուրջ ձեռք բերված բանավոր պայմանավորվածությունը:

Առավել ինտենսիվ խախտումներ են արձանագրվել շփման գոտու հյուսիսային (Թալիշ) ուղղությամբ:³¹ Հրաչյան փորձել է փրկել կրակահերթի տակ գտնվող վիրավոր ընկերոջ կյանքը, սակայն ինքն է մահացու վիրավորում ստացել:

8. Սուրեն Միսակի Ճարատանյան

Կամավորական Սուրեն Ճարատանյանը հրազենային վիրավորում է ստացել 2016 թ. ապրիլի 7-ին Թալիշում, վիրահատվել է Ստեփանակերտում, այնուհետև նաև Երևանում, սակայն կյանքը փրկել չի հաջողվել, մահացել է ապրիլի 8-ին:³²

1955թ. ծնված Սուրեն Ճարատանյանը կամավորագրվել և առաջնագիծ է մեկնել ապրիլի 3-ին, ունեցել է բազմաթիվ առողջական խնդիրներ՝ սիրտը 3 անգամ ստենդավորված է եղել, երիկամները վատ վիճակում էին:

Փորձել է վիրավոր զինծառայողներին տեղափոխել խրամատ, որ օգնություն ցույց տան, սակայն հակառակորդի կողմից իր վրա ավտոմատի կրակահերթ են բացել: Հուղարավորվել է ապրիլի 11-ին Եռաբլուր պանթեոնում:³³

9. Արմեն Կառլենի Գասպարյան

2016 թ. ապրիլի 6-ին ժամը 18:30-ին, դարաբաղա-ադրբեջանական հակամարտ գորքերի շփման գծի հյուսիսարևելյան (Թալիշի) ուղղությամբ տեղակայված մարտական հենակետում հակառակորդի ականանետային կրակից մահացու

³¹ <http://168.am/2016/04/08/620665.html>

³² <http://www.yerkir.am/news/view/104788.html>

³³ <http://www.aravot.am/2016/04/11/678548/>

վիրավորում է ստացել ՊԲ պայմանագրային զինծառայող, 1974թ. ծնված Արմեն Կառլենի Գասպարյանը:³⁴ Նա պահեստագործի ավագ լեյտենանտ էր:

Լրատվական միջոցներով կամ պաշտոնական աղբյուրներով զինծառայողի մահվան դեպքի և հանգամանքների վերաբերյալ այլ տեղեկատվություն չի հրապարակվել:

10. Մանվել Արմենի Գևորգյան

Պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Մանվել Գևորգյանը զոհվել է 2016 թ. ապրիլի 14-ին՝ գիշերը ժամը 23:20-ի սահմաններում՝ Մարտունու ուղղությամբ հակառակորդի կրակոցից:³⁵

Դեպքով հարուցված քրեական գործի կամ այլ մանրամասների մասին դեպքից հետո և մինչ այժմ այլ տեղեկատվություն չի հրապարակվել:

11. Համլետ Այվազի Հաջոյան

2016 թ. ապրիլի 14-ին Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակի հյուսիսարևելյան (Թալիշ) ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ-ի պայմանագրային զինծառայող, 1970 թվականին ծնված ազգությամբ եզդի Համլետ Այվազի Հաջոյանը:³⁶

Դեպքով հարուցված քրեական գործի կամ այլ մանրամասների մասին դեպքից հետո և մինչ այժմ այլ տեղեկատվություն չի հրապարակվել:

12. Գևորգ Գարեգինի Գևորգյան

2016 թ. ապրիլի 19-ին՝ ժամը 09:50-ի սահմաններում, ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի՝ Ջաբրայիլի պահպանության մարտական հենակետում, հակառակորդի կրակոցից զոհվել է ՊԲ պարտադիր ժամկետային զինծառայող շարքային, 1996թ. ծնված Գևորգ Գարեգինի Գևորգյանը:³⁷

Դեպքով հարուցված քրեական գործի կամ այլ մանրամասների մասին դեպքից հետո և մինչ այժմ այլ տեղեկատվություն չի հրապարակվել:

³⁴ <http://www.aravot.am/2016/04/07/676391/>

³⁵ <http://168.am/2016/04/15/623935.html>

³⁶ <http://www.aravot.am/2016/04/14/680074/>

³⁷ <http://razm.info/82785>

13. Մարատ Ռաֆայելի Դանիելյան

ՊԲ պայմանագրային զինծառայող, 1984թ. ծնված Մարատ Ռաֆայելի Դանիելյանը զոհվել է 2016 թ. ապրիլի 21-ին, ժամը՝ 06:30-ի սահմաններում, հակամարտ գորքերի շփման գծի հյուսիսային (Թալիշ) ուղղությամբ ադրբեջանական զինուժի կողմից ձեռնարկված նախահարձակ գործողության արդյունքում: Այդ մասին տեղեկացրել է ԼՂ ՊՆ մամուլի ծառայությունը.³⁸

ԼԳՀ նախագահի հրամանագրով Մարատ Դանիելյանը հետմահու պարգևատրվել է Մարտական Ծառայության մեդալով:

Դեպքով հարուցված քրեական գործի կամ այլ մանրամասների մասին դեպքից հետո և մինչ այժմ պաշտոնական աղբյուրների կամ ԶԼՄ-ների կողմից այլ տեղեկատվություն չի հրապարակվել:

14. Տիգրան Մխիթարի Պողոսյան

Լեյտենանտ Տիգրան Պողոսյանը զոհվել է 2016 թ. ապրիլի 25-ի լույս 26-ի գիշերը Մարտակերտի մարտական դիրքում՝ ականանետի պայթյունի հետևանքով:³⁹

Լեյտենանտ Տիգրան Պողոսյանը զինված ուժերում էր 2010 թ-ից: 2016թ. ապրիլի 2-ից իր վաշտով մասնակցել է Մարտակերտի պաշտպանական մարտերին: Տիգրանի հրամանատրության ներքո գտնվող դիրքերում ապրիլյան ռազմական գործողությունների ժամանակ զոհեր չեն եղել: Ապրիլի 25-ի լույս 26-ի գիշերը ադրբեջանական զինուժի հրետակոծության ժամանակ Տիգրանը իր մարմնով փրկել է դիտակետում հերթապահություն իրականացնող զինվորի կյանքը:

Տիգրան Մխիթարյանը հետմահու պարգևատրվել է ԼՂՀ նախագահի՝ «Մարտական ծառայություն» և ՀՀ՝ «Արիություն» մեդալներով:

15. Արամ Նիկողայի Առուշանյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 25-ին և լույս 26-ի գիշերը դարաբաղա-ադրբեջանական հակամարտ ուժերի շփման գծում Մատաղիսի ուղղությամբ: ⁴⁰ Փոխգնդապետ էր, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր:

Զոհվելու հանգամանքները և այլ մանրամասներ հայտնի չեն:

³⁸ <http://www.aravot.am/2016/04/21/682441/>

³⁹ <http://www.1in.am/1900045.html>

⁴⁰ <http://hetq.am/arm/news/67596/ays-gisher-hakarakordy-kirarel-e-zenitayin-kayang%E2%80%A4-unenq-2-zoh.html>

16. Հայկ Սամվելի Մինասյան

2016 թ. ապրիլի 26-ին՝ Մատաղիսի ուղղությամբ տեղակայված դիրքերում հակառակորդի կողմից ձեռնարկված ագրեսիվ գործողությունների հետևանքով՝ ականի պայթյունից մահացու վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 1996թ. ծնված շարքային Հայկ Սամվելի Մինասյանը:⁴¹

Հայկը ապրիլյան ռազմական գործողությունների ժամանակ եղել է առաջնագծում և եղել է հրետանավոր: Ապրիլի 26-ին մահացել է ականի պայթյունից, որի բեկորը դիպել է ուղիղ սրտին: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների հետ հանդիպման ժամանակ Հայկի հայրը նշեց, որ Հայկի մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Հայկը հետմահու ՀՀ և ԼՂ նախագահների կողմի պարգևատրվել է «Մարտական ծառայություն» շքանշաններով:

17. Գարիկ Մնացականի Մովսիսյան

2016 թ. ապրիլի 29-ի լույս 30-ի գիշերը՝ հյուսիսային (Թալիշ) ուղղությամբ հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով ականի պայթյունից ստացած վիրավորումներից զոհվել է ՊԲ զինծառայող, կրտսեր սերժանտ 1997թ. ծնված Գարիկ Մնացականի Մովսիսյանը:⁴²

Գարիկ Մովսիսյանի զոհվելու հանգամանքների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

18. Վազգեն Հենրիկի Հարությունյան

2016 թ. ապրիլի 29-ի լույս 30-ի գիշերը հյուսիսային (Թալիշ) ուղղությամբ հակառակորդի կողմից կրակի դադարեցման պայմանավորվածության խախտման արդյունքում մահացու վիրավորում է ստացել կամավորական Վազգեն Հենրիկի Հարությունյանը:⁴³

Վազգեն Հարությունյանի զոհվելու հանգամանքների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

⁴¹ <http://yerkirmedia.am/emergency/karabakh-sahman-hradadar-zoh/>

⁴² <http://razm.info/83130>

⁴³ <http://www.aravot.am/2016/04/30/686437/>

19. Օնիկ Ալբերտի Մահակյան

Ռազմինֆո լրավատվական կայքի տարածած հաղորդագրության համաձայն 2016 թ. ապրիլի 21-ին Ջաբրայիլում գոհվել է կամավորական Օնիկ Ալբերտի Մահակյանը:⁴⁴

Չոհված կամավորականը Երևանից է, ծնվել է 1976թ.: Կամավորականի մահվան հանգամանքներն առայժմ հայտնի չեն:

20. Աշոտ Շավարշի Զոհրաբյան

2016 թ. ապրիլի 30-ին՝ Մարտունու մարտական հենակետերից մեկում՝ ինժեներական աշխատանքներ կատարելու ժամանակ դիպուկահարի կրակոցից գոհվել է ավագ լեյտենանտ 1991թ. ծնված Աշոտ Շավարշի Զոհրաբյանը⁴⁵:

Զինձառայողի գոհվելու հանգամանքների վերաբերյալ պաշտոնական որևէ մարմնի կողմից մինչ այժմ այլ տեղեկատվություն չի հրապարակվել:

21. Սարգիս Արթուրի Գասպարյան

Վիրավորվել է ապրիլի 29-ի լույս 30-ի գիշերը, Թալիշում: Նրան նախ վիրահատել են Մարտակերտի հոսպիտալում, ապա տեղափոխել Ստեփանակերտի հոսպիտալ, որտեղ էլ 02.05.2016թ. մահացել է:

Սարգիսը ծառայությունն ավարտել էր փետրվարի 5-ին, բայց ապրիլյան պատերազմի ժամանակ կրկին վերադարձել էր դիրքեր: Սարգիս Գասպարյանը փորձել է փրկել վիրավոր զինձառայող՝ Վազգեն Հենրիկի Հարությունյանի կյանքը, սակայն նրա վիրավորումը մահացու է եղել: Հրազենային վիրավորում է ստացել սկզբում ոտքի մասում, այնուհետև՝ որովայնի շրջանում՝ փամփուշտները մի կողմից մտնել, մյուս կողմից դուրս են եկել, ինչի հետևանքով ներքին բոլոր օրգանները վնասվել են:⁴⁶

22. Արմեն Հրայրի Մարտիրոսյան

2016 թ. մայիսի 11-ին, ժամը՝ 20:00-ի սահմաններում ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի (Մատաղիս) պահպանության

⁴⁴ <http://razm.info/82902>

⁴⁵ <http://www.lragir.am/index/arm/0/country/view/132125>

⁴⁶ <http://iravaban.net/125950.html>

տեղամասում մահացու վիրավորում է ստացել պարտադիր ժամկետային զինծառայող, 1996թ. ծնված Արմեն Հրայրի Մարտիրոսյանը:⁴⁷

Ըստ ՀՀ ՊՆ-ն հաղորդագրության՝ դեպքը տեղի է ունեցել ԵԱՀԿ առաքելության կողմից նույն օրը ԼՂ Մարտակերտի շրջանում իրականացված դիտարկումից ընդամենը ժամեր անց:

23. Արամ Վաղինակի Օհանյան

2016 թ. մայիսի 14-ին, ժամը՝ 19:40-ի սահմաններում, ՀՀ պետական սահմանագոտու հարավարևմտյան ուղղությամբ (Վայք) տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հակառակորդի կողմից արձակված դիպուկահարի կրակոցից որովայնի շրջանում հրազենային վիրավորում է ստացել պայմանագրային զինծառայող ավագ սերժանտ Արամ Օհանյանը:⁴⁸

Նույն օրը՝ ժամը 21:00-ին, Վայքի քաղաքային հիվանդանոցում արձանագրվել է զինծառայողի կենսաբանական մահը: ՀՀ քննչական կոմիտեի Զինվորական քննչական գլխավոր վարչության ութերորդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ, կատարվում է նախաքննություն:⁴⁹

24. Խաչատուր Վարդանի Հարությունյան

2016 թ. մայիսի 17-ին՝ ժամը 00:50-ի սահմաններում Ջաբրայիլի մարտական դիրքում, ադրբեջանական դիպուկահարի կրակոցից մահացու հրազենային վիրավորում է ստացել պարտադիր ժամկետային զինծառայող 1996թ ծնված Խաչատուր Վարդանի Հարությունյանը:⁵⁰

Դեպքը տեղի է ունեցել Վիեննայում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերով կազմակերպված Հայաստանի և Ադրբեջանի Հանրապետությունների նախագահների հանդիպման ընթացքում:

⁴⁷ <http://razm.info/83409>

⁴⁸ <http://www.mil.am/hy/news/4067>

⁴⁹ <http://investigative.am/news/view/aram-ohanyan.html>

⁵⁰ <http://razm.info/83563>

25. Վահե Արզամի Եղոյան

2016 թ. մայիսի 25-ին՝ ժամը 18:20-ի սահմաններում, Մատաղիսի գորամասի պահպանության շրջանի մարտական դիրքում՝ գլխի շրջանում ստացած հրազենային վիրավորումով հայտնաբերվել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Վահե Արզամի Եղոյանը: Վերջինս զինհոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին մահացել է:⁵¹

Նախնական տվյալներով զինծառայողի մահվան դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով:⁵²

26. Արսեն Արայիկի Առաքելյան

2016 թ. հուլիսի 23-ին, ժամը 10:55-ի սահմաններում, հարավ-արևելյան ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում, հակառակորդի կողմից արձակված գնդակից մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող Արսեն Արայիկի Առաքելյանը:⁵³

Դեպքի վերաբերյալ հարուցված քրեական գործով կատարվող նախաքննության վերաբերյալ պաշտոնական այլ տեղեկատվություն չի տարածվել:

27. Արայիկ Սամվելի Օրդուբեկյան

2016 թ. սեպտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը՝ ժամը 23:30-ի սահմաններում, ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում, մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, 1997թ. ծնված Արայիկ Սամվելի Օրդուբեկյանը:⁵⁴

Դեպքի վերաբերյալ հարուցված քրեական գործով կատարվող նախաքննության վերաբերյալ պաշտոնական այլ տեղեկատվություն չի տարածվել:

28. Սևակ Հովհաննեսի Խաչատրյան

2016 թ. սեպտեմբերի 25-ին՝ ժամը 10:40—ի սահմաններում, ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասի

⁵¹ <http://investigative.am/news/view/vahe-exoyan-mah.html>

⁵² <http://investigative.am/news/view/vahe-exoyan-mah.html>

⁵³ <http://www.tert.am/am/news/2016/05/31/vahe-eghoyan/2036547>

⁵⁴ <http://nkrmil.am/news/view/1393>

⁵⁴ <http://hetq.am/arm/news/70454/sahmanin-zinvor-e-zohvel.html>

մարտական դիրքում հակառակորդի կողմից արձակված գնդակից մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, 1997 թ. ծնված Սևակ Հովհաննեսի Խաչատրյանը:⁵⁵

Ինչպես հայտնում է ՀՀ քննչական կոմիտեն երկրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ, կատարվում է նախաքննություն:⁵⁶

29. Սանասար Մավրիկի Գրիգորյան

2016 թ. հոկտեմբերի 11-ին՝ ժամը 12:10-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացու հրազենային վիրավորում է ստացել պայմանագրային զինծառայող, 1989թ. ծնված Սանասար Մավրիկի Գրիգորյանը:

Դեպքի վերաբերյալ, ինչպես հայտնում է ՀՀ Քննչական կոմիտեն, առաջին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ, կատարվում է նախաքննություն:⁵⁷

Զինծառայողը ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի կողմից հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» շքանշանով:

30. Գուրգեն Ավետիքի Այվազյան

2016 թ. հոկտեմբերի 26-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, 1996թ. ծնված Գուրգեն Ավետիքի Այվազյանը:⁵⁸

Երրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական

⁵⁵ <http://nkrmil.am/news/view/1512>

⁵⁶ <http://investigative.am/news/view/sevak-xachatryan.html>

⁵⁷ <http://investigative.am/news/view/zincarayox-sanasar-grigoryan.html>

⁵⁸ <http://nkrmil.am/news/view/1564>

մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ: Կատարվում է նախաքննություն:⁵⁹

31. Նարեկ Վլադիկի Ասատրյան

2016 թ. հոկտեմբերի 29-ին Երևանում՝ ՀՀ ՊՆ Կենտրոնական զինվորական բժշկական հոսպիտալում մահացել է 2016 թ. հուլիսի 16-ին գլխի շրջանում ականի պայթյունի հետևանքով վիրավորում ստացած Նարեկ Վլադիկի Ասատրյանը:⁶⁰

Շարքային Նարեկ Ասատրյանը վիրավորումը ստացել էր հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով՝ խրամատում ականի պայթյունի արդյունքում: Ջինձառայողը մասնակցել էր նաև 2016 թ. ապրիլի քառօրյա պատերազմին, ծառայում էր Մատադիսում:⁶¹

Դեպքի առթիվ քրեական գործի հարուցման վերաբերյալ ՀՀ Քննչական կոմիտեի կողմից որևէ տեղեկատվություն չի տարածվել:

32. Շավարշ Մելիքսեթի Մելիքյան

33. Էդգար Գրիգորի Նարայան

34. Էրիկ Գարիկի Աբովյան

2016 թ. դեկտեմբերի 29-ին Չինարի գյուղից դեպի հարավ արևելք ընկած պետական սահմանի հատվածում ադրբեջանական զորքերի ձեռնարկած դիվերսիոն ներթափանցման փորձի հետևանքով մահացել են լեյտենանտ Շավարշ Մելիքսեթի Մելիքյանը, շարքայիններ՝ Էդգար Գրիգորի Նարայանը և Էրիկ Գարիկի Աբովյանը:⁶²

Դեպքի առթիվ ՀՀ ՊՆ տարածված պաշտոնական հաղորդագրությունում ասվում էր, որ զինձառայողները զոհվել են ՀՀ պետական սահմանի պաշտպանության համար մղված մարտերի ընթացքում:⁶³

Սակայն ՋԼՄ-ների տարածած տեղեկատվության համաձայն՝ ադրբեջանական դիվերսիոն գործողությունների ժամանակ զինվորները լվացվելիս են եղել: Սպան շտապել է նրանց օգնության, սակայն զոհվել է հակառակորդի գնդակից:⁶⁴

2016 թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ Քննչական կոմիտեի կողմից տարածվեց հայտարարություն, որում նշվում էր, որ դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ

⁵⁹ <http://investigative.am/news/view/garegin-ayvazyan.html>

⁶⁰ <https://news.am/arm/news/359931.html>

⁶¹ <https://news.am/arm/news/360398.html>

⁶² <https://news.am/arm/news/365639.html>

⁶³ <http://www.mil.am/hy/news/4557>

⁶⁴ <http://www.lragir.am/index/arm/1/country/view/145495>

վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 384-րդ հոդվածի 2-րդ մասով և 104-րդ հոդված 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետերով հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:⁶⁵

Բ. Հրադադարի ռեժիմի խախտում / ապրիլի 1-5 ընկած ժամանակահատվածի մարտական գործողություններ

1. Նոդարիկ Արտաշի Մարգարյան

2016 թ. ապրիլի 2-ի առավոտյան՝ Մատաղիսի զորամասի տարածքում ադրբեջանական կողմի հրետակոծության հետևանքով մահացու վիրավորում է ստացել պայմանագրային զինծառայող, զորամասի ՆԱՎ առբերման դասակի վարորդ, եֆրեյտոր Նոդարիկ Արտաշի Մարգարյանը:⁶⁶

Դեպքը տեղի է ունեցել մեքենան սննդամթերք բարձելու ժամանակ, արկը պայթել է մեքենայի կողքին, ինչի արդյունքում Նոդարիկ Մարգարյանը տեղում մահացել է:

2. Հրանտ Սամվելի Ղարիբյան

2016 թ. ապրիլի 2-ին Մատաղիսի շրջանում զոհվել է առաջնագիծ զինամթերք և սնունդ տեղափոխող ավագ վարորդ, պայմանագրային զինծառայող, շարքային 1947թ. ծնված Հրանտ Սամվելի Ղարիբյանը:

Հրանտ Ղարիբյանի զոհվելու հանգամանքների մասին հավելյալ տեղեկատվությունը բացակայում է:

3. Մերուժան Արթուրի Ստեփանյան

2016թ. ապրիլի 2-ի լույս 3-ի գիշերը ժամը 04-05-ի սահմաններում, Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքեր գլխից մահացու վիրավորում է ստացել ավագ լեյտենանտ 1993թ ծնված Մերուժան Արթուրի Ստեփանյանը:⁶⁷

2013 թ-ից զինված ուժերում էր, կոչումով ավագ լեյտենանտ: Ապրիլի 2-ին իր դասակի հետ երկարատև մարտ է մղել: Մերուժանը զոհվել է հրազենային մահացու

⁶⁵ <http://www.investigative.am/news/view/diversion-harcakum.html>

⁶⁶ <http://www.aravot.am/2016/04/04/674829/>

⁶⁷ <http://galatv.am/hy/news/23-22/>

վիրավորումից: Հետմահու պարգևատրվել է ՀՀ «Արիություն» շքանշանով և ԼՂ «Մարտական ծառայություն» շքանշանով:

4. Վիկտոր Ալեքսանդրի Յուզիխովիչ

2016 թ. ապրիլի 3-ին Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում զոհվել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային 1997թ. ծնված Վիկտոր Ալեքսանդրի Յուզիխովիչը.⁶⁸

Վիկտորը եղել է Մերուժան Ստեփանյանի և Հրայրա Մուրադյանի ծառայակիցը, նրանց հետ կռվել է մինչև զոհվելը: Հետմահու պարգևատրվել է ԼՂ «Մարտական ծառայություն» շքանշանով:⁶⁹

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Վիկտոր Յուզիխովիչի հոր՝ Ալեքսանդր Յուզիխովիչի ցանկությամբ, հարուցված քրեական գործի շրջանակներում՝ իրականացնելու է տուժողի իրավահաջորդի իրավունքների պաշտպանությունը՝ հանդես գալով որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ:

5. Սասուն Ֆահրադի Մկրտչյան

2016 թ. ապրիլի 2-ին Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում մահացու հրազենային վիրավորում է ստացել է հետախույզ-գնդացրորդ, պայմանագրային զինծառայող, շարքային Սասուն Ֆահրադի Մկրտչյանը:

Նա պտտվող գնդակից ծանր վիրավորվել է, ընկերներն իջեցրել են դիրքերից, փորձելով փրկել Սասունի կյանքը, սակայն շտապ օգնությանը չի հաջողվել փրկել նրա կյանքը:⁷⁰

ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով՝ Սասուն Մկրտչյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

6. Ռաֆիկ Խլդաթի Հակոբյան

2016 թ. ապրիլի 2-ին Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում զոհվել է հետախույզ, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Ռաֆիկ Խլդաթի Հակոբյանը:

⁶⁸ <http://www.lragir.am/index/arm/0/country/view/142716>

⁶⁹ <http://galatv.am/hy/tvprograms/videos/news19-13/>

⁷⁰ <http://168.am/2016/05/20/638802.html>

Մարմինը գյուղ բերած զինվորականները պատմել են, որ Ռաֆիկը զոհվել է ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը ադրբեջանական կողմի առաջին հարձակման ժամանակ: Նրա մարմնի վրա առկա են եղել խոշտանգման հետքեր:⁷¹

7. Հովսեփ Գեղամի Կիրակոսյան

2016 թ. ապրիլի 2-ին Թալիշի ուղղությամբ մարտադաշտում զոհվել է զորամասի ԻՍՎ հրամանատար, կապիտան 1988թ. ծնված Հովսեփ Գեղամի Կիրակոսյանը:

Զորամասի ինժինեռասակրավորական վաշտի հրամանատար կապիտան Հավսեփ Կիրակոսյանը մահացու հրազենային վիրավորում է ստացել ապրիլի 2-ին, Մատաղիսի մարտադաշտում, դաշտը ականապատելու ժամանակ: Զինվորները նրան խրամատ են տարել, ինտենսիվ հրետանակոծության պատճառով չեն կարողացել դուրս բերել տարածքից: Զոհվել է հոսպիտալում ժամեր անց:⁷²

ԼՂ նախագահի կողմից հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» շքանշանով:

8. Արմենակ Մերսի Ուրֆանյան

2016 թ. ապրիլի 2-ին Մարտակերտի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում զոհվել է 4-րդ հրաձգային վաշտի հրամանատար, կապիտան 1990թ. ծնված Արմենակ Մերսի Ուրֆանյանը: Զինված ուժերում է եղել 2007 թ-ից:⁷³

Նա իր 6 հոգանոց խմբի հետ եղել է Մարտակերտի պաշտպանական դիրքում: Առաջին հարձակման ժամանակ զինվորներից 2-ը վիրավորվել են, նրանց հետ է ուղարկել: Քյարամ Սլոյանի, Անդրանիկ Զոհրաբյանի և Ռոբերտ Աբաջյանի հետ շարունակել է մարտը: Զոհվել է Քյարամ Սլոյանի հետ միասին՝ ականի պայթյունից:⁷⁴

9. Քյարամ Քալայի Սլոյան

2016 թ. ապրիլի 2-ին Մարտակերտի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում ականի պայթյունից զոհվել է պարտադիր ժամկետային զինծառայող, ազգությամբ եզդի շարքային Քյարամ Քալայի Սլոյանը:

⁷¹ <http://medialab.am/news/id/6923>

⁷² <http://www.mediamax.am/am/news/special-report/17890>

⁷³ <http://news.am/arm/news/320497.html>

⁷⁴ <http://zham.am/am/news/62099.html>

Նրա գլուխը կտրել են և տեղափոխել Ադրբեջանի տարածք: Ադրբեջանական օգտատերերը համացանցում լուսանկարներ և տեսանյութ են տարածել, թե ինչպես է հատուկ ջոկատայինը ադրբեջանական գյուղերում ցուցադրում նրա գլուխը: Քյարամ Սլոյանի գլուխը հայկական կողմին է վերադարձվել Կարմիր Խաչի միջնորդությամբ:⁷⁵

10. Ռոբերտ Ալեքսանդրի Աբաջյան

2016 թ. ապրիլի 2-ին Մարտակերտի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում, իրեն ամրակցված նոնակը պայթեցնելով, զոհվել է պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Ռոբերտ Ալեքսանդրի Աբաջյանը:⁷⁶

Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշեր երկար ժամանակ մարտ է վարել, սակայն օգնական ուժերի ուշանալու և զինամթերքի վերջանալու պատճառով զոհվել:⁷⁷

Մարմինը մարտադաշտից հանել են ապրիլի 7-ին Կարմիր Խաչի դաշտային որոնողական աշխատանքների ժամանակ:

11. Անդրանիկ Ատումի Զոհրաբյան

2016 թ. ապրիլի 2-ին Մարտակերտի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում զոհվել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Անդրանիկ Ատումի Զոհրաբյանը:

Մարտական հերթապահություն է իրականացրել Արմենակ Ուրֆանյանի վաշտում, Քյարամ Սլոյանի և Ռոբերտ Աբաջյանի հետ, նրանց հետ էլ զոհվել է նույն օրը: Ռազմական գործողությունները սկսելու ժամանակ ընկել են շրջափակման մեջ, Անդրանիկը վիրավորվել է ու զոհվել արյունահոսությունից:⁷⁸

12. Արման Մեյրանի Անդրասյան

13. Աշոտ Կարապետի Շահբազյան

14. Նորիկ Զավենի Սարգսյան

15. Գրիգոր Գևորգի Հարությունյան

16. Բորիս Ռաֆիկի Օզմանյան

17. Վահե Մամվելի Զաքարյան

18. Արթուր Գառնիկի Գևորգյան

⁷⁵ <http://openblog.am/?p=5074>

⁷⁶ <http://news.am/arm/news/326358.html>

⁷⁷ <http://blognews.am/arm/news/367550/>

⁷⁸ <http://168.am/2016/06/12/647985.html>

19. Ազատ Քաջիկի Միմոնյան
20. Տիգրան Էդուարդի Բերակչյան
21. Ադամ Խաչատուրի Սահակյան
22. Բագրատ Արթուրի Ալեքսանյան
23. Ժորա Արթուրի Եսայան
24. Կարեն Արտակի Ներսիսյանը

2016 թ. ապրիլի 2-ին, Ջաբրայիլի մարտական դիրքերում պատերազմական գործողությունների ժամանակ զոհվել են ավագ լեյտենանտ Աշոտ Կարապետի Շահբազյանը, պարտադիր ժամկետային զինծառայողներ, կրտսեր սերժանտ Արման Մեյրանի Անդրասյանը, շարքային Նորիկ Ջավենի Սարգսյանը, շարքային Գրիգոր Գևորգի Հարությունյանը, շարքային Բորիս Ռաֆիկի Օզմանյանը, շարքային Վահե Մամվելի Ջաքարյանը, շարքային Արթուր Գառնիկի Գևորգյանը, շարքային Ազատ Քաջիկի Միմոնյանը, շարքային Տիգրան Էդուարդի Բերակչյանը, սերժանտ Ադամ Խաչատուրի Սահակյանը, շարքային Բագրատ Արթուրի Ալեքսանյանը, շարքային Ժորա Արթուրի Եսայանը, սերժանտ Յուրի Անատոլիի Փարամազյանը, շարքային Կարեն Արտակի Ներսիսյանը:

Զինծառայողները ապրիլի 1-լույս 2-ի գիշերը հերթապահություն էին իրականացնում Ջաբրայիլի գորամասի հսկողության տակ գտնվող մարտական դիրքերում: Ջաբրայիլի այդ դիրքերը գրավվել են հակառակորդի զինուժի կողմից, և զինծառայողները մինչև ապրիլի 10-ը համարվել են անհետ կորած:

2016թ. ապրիլի 10-ին, համաձայն նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ռազմագերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողովը՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի միջնորդությամբ, Բաշ Բարվենդ բնակավայրի մոտակայքում իրականացրել է զոհվածների մարմինների փոխանակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի միջև:

Փոխանակման ընթացքում ղարաբաղյան կողմին է հանձնվել 2016 թ. ապրիլի 2-5-ը Ադրբեջանի կողմից իրականացված լայնածավալ ռազմական ագրեսիայի

արդյունքում առաջնագծում գոհված ԼՂ Պաշտպանության բանակի 18 զինծառայողի մարմին:⁷⁹

25. Ալեքսան /Ալիկ/ Գևորգի Առաքելյան

26. Ռոման Վլադիմիրի Պողոսյան

27. Սուրեն Գրիգորիի /Գրիշայի/ Մելքումյան

28. Օնիկ Կարոյի Գրիգորյան

29. Մաքսիմ Վազիֆի Գրիգորյան

2016թ. ապրիլի 2-ի առավոտյան տեղեկանալով, որ Ջաբրայիլի դիրքերի վրա հարձակում է եղել, փոխգնդապետ Ալեքսան Գևորգի Առաքելյանը 4 զինակիցների՝ փոխգնդապետ **Ռոման Վլադիմիրի Պողոսյանի**, զորամասի հրամանատար **ԹԳ տեղակալ Օնիկ Կարոյի Գրիգորյանի**, վառելիքաքսայուղային նյութերի ծառայության պետ, մայոր **Սուրեն Գրիգորիի Մելքումյանի** և ավագ լեյտենանտ **Մաքսիմ Վազիֆի Գրիգորյանի** հետ շտապել է առաջնագիծ՝ զինվորներին օգնելու: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների հետ հանդիպման ժամանակ Ալեքսան Առաքելյանի հայրը, ով ապրիլի 2-ից գտնվել է Ջաբրայիլում, հայտնեց որ Ալեքսանը և նրա հետ առաջնագիծ մեկնած մյուս զինծառայողները տեղյակ չեն եղել, որ դիրքերն արդեն գրավված են, առաջ շտապելով՝ հայտնվել են շրջափակման մեջ: 5 սպաները մինչև ապրիլի 10-ը համարվել են անհետ կորած:

Նրանց մարմինները եղել են 2016թ. ապրիլի 10-ին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի միջնորդությամբ, Բաշ Քարվենդ բնակավայրի մոտակայքում հայկական կողմին վերադարձված զինծառայողների շարքում:

Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ավագ օգնական Ալիկ Ավետիսյանը հաստատել է, որ հայկական կողմին վերադարձված գրեթե բոլոր 18 զինծառայողների մարմինները խոշտանգված են եղել:⁸⁰

30. Սաշա Վաչագանի Գալստյան

2016 թ. ապրիլի 2-ին Ջաբրայիլի մարտական հենակետում գոհվել է կրտսեր սերժանտ Սաշա Վաչագանի Գալստյանը:⁸¹

⁷⁹ <http://www.azatutyun.am/archive/news/latest/2031/2031.html?id=27665735>

⁸⁰ <http://www.azatutyun.am/content/article/27667416.html>

Սաշա Գալստյանը ծառայում էր որպես գորամասի բուժակ՝ երկրորդ գծում: ԼՂ նախագահ Բակո Սահակյանի կողմից պարգևատրվել է «Արիություն» շքանշանով:

31. Հրաչ Վարդանի Գալստյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 3-ին Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում: 2007 թ.-ից զինված ուժերում էր, կոչումով ավագ լեյտենանտ:⁸²

Հետմահու պարգևատրվել է ԼՂ նախագահի շքանշանով:

32. Գագիկ Սուրիկի Մելքոնյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 3-ին Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում: Պայմանագրային զինծառայող, ենթասպա:

Պարտադիր ժամկետային զինծառայությունն ավարտելուց հետո անցել է պայմանագրային ծառայության, ծառայել է Օմարի Սարում՝ Քելբաջար: Որոշակի ժամանակ ծառայելուց հետո ՊՆ-ի կողմից հրաման է ստացել և Երևանում սովորել է, որից հետո կրկին վերադարձել է Սարտունի ու անցել աշխատանքի, Քելբաջար է տեղափոխվել 2016 թվականին: Ընտանիքին Գագիկի զոհվելու լուրը հայտնել են ապրիլի 4-ին: Պարգևատրվել է ՀՀ նախագահի «Արիություն» շքանշանով:⁸³

33. Ռուբեն Աշոտի Իսկանդարյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 3-ին Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում: Պարտադիր ժամկետային զինծառայող էր, սերժանտ:

Ընտանիքին դեպքի մասին հայտնել են ապրիլի 4-ին, նույն օրը մարմինը տեղափոխվել է Երևան: Ռուբենը դեռևս որևէ շքանշանով չի պարգևատրվել:⁸⁴

34. Աղասի Սարմենի Ասատրյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 3-ին Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում:

Պարտադիր ժամկետային զինծառայող էր, շարքային: Հետմահու պարգևատրվել է ԼՂ նախագահի «Մարտական ծառայություն» շքանշանով:⁸⁵

⁸¹ <http://lurer.com/?p=219061&l=am>

⁸² <http://hetq.am/arm/news/67196/talishum-nahatakvats-gyumreci-avag-leytenant-hrach-galstyany-spasum-er-arajnekin.html>

⁸³ <http://168.am/2016/04/07/620423.html>

⁸⁴ <http://www.aravot.am/2016/04/06/676143/>

35. Գեղամ Ռաշիդի Մկրտչյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 3-ին՝ հյուսիսային ուղղությամբ տեղակայված հենակետ: Պայմանագրային զինծառայող, հետախույզ, սակրավոր, զինված ուժերում է 2013 թ.-ից:

Զինծառայողի զոհվելու հանգամանքների մասին տեղեկատվությունը բացակայում է:⁸⁶

36. Հայկ Վահանի Թորոյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 2-ին Մարտակերտի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում: Մայրը էր, զինված ուժերում էր 2002 թ.-ից:

Ապրիլի 4-ին Արաբկիրի զինվորական կոմիսարիատից այցելել են Թորոյանների տուն և հայտնել Հայկի մահվան լուրը: Ապրիլի 5-ին դին տեղափոխվել է Երևան և տեղի է ունեցել ճանաչման գործընթացը: ԼՂ-ի կողմից պարզևատրվել է «Արիություն» շքանշանով:⁸⁷

37. Բենիամին Ներսեսի Եղոյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 3-ին Ջաբրայիլ:

Եղել է տանկի տանկային դասակի հրամանատար, ավագ-լեյտենանտ:

Զինված ուժերում էր 2009 թ.-ից: Ավագ լեյտենանտ Բենյամին Ներսեսի Եղոյանը զոհվել է 03.04.2016թ. Թալիշի շրջանի մարտական դիրքերում, նրա ղեկավարած տանկը արկակոծվել է, որի հետևանքով նա այրվել է տանկի մեջ: Հարազատները նրա մահվան մասին իմացել են 04.04.2016թ.. հուղարկավորվել է 09.04.2016թ Եռաբլուր զինվորական պանթեոնում: ԼՂ նախագահ Բակո Սահակյանի կողմից պարզևատրվել է «Մարտական ծառայություն» շքանշանով:⁸⁸

38. Տիգրան Արամի Աբգարյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 3-ին Ջաբրայիլի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում: Պարտադիր ժամկետային զինծառայող էր, շարքային:

⁸⁵ <http://168.am/2016/04/24/627676.html>

⁸⁶ <http://hetq.am/arm/news/71529/vech-mi-petutyun-mez-ognox-chi-menq-piti-mer-kriyv-anenq-prtsnenq--asum-e-aprilin-zohvats-gexam-mkrtyani-hayry.html>

⁸⁷ <http://168.am/2016/05/11/635172.html>

⁸⁸ <http://news.am/arm/news/321481.html>

Տիգրան Արգարյանը եղել է տանկի մեխանիկ-վարորդ: Ապրիլյան ռազմական գործողությունների ժամանակ միևնույն տանկում է եղել Բենիամին Եղոյանի և Վլադիմիր Ալիխանյանի հետ: Նրանց տանը երկարատև կռիվ է մղել հակառակորդի 8 տանկերի դեմ: Տիգրանը և Վլադիմիրը ծառայել են Ֆիզուլիում, եղել են միևնույն տանկի մեխանիկ-վարորդը և նշանառու օպերատորը: Բենիամին Եղոյանը եղել է նրանց տանկի հրամանատարը: Միասին բազմիցս մասնակցել են տանկային բիաթլոնների և լավագույնս ներկայացել դրանցում:⁸⁹

39. Վլադիմիր Վարուժանի Ալիխանյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 3-ին Ջաբրայիլի մարտական հենակետում: Պարտադիր ժամկետային զինծառայող էր, շարքային, տանկիստ, նշանառու-օպերատոր: Միևնույն տանկի մեջ է եղել Բենիամին Եղոյանի և Տիգրան Արգարյանի հետ:

Լավագույն ծառայության համար ՀՀ պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվել է ձեռքի ժամացույցով:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» շքանշանով ԼՂ-ի, և «Մարտական խաչ 1 աստիճան» շքանշանով ՀՀ նախագահի կողմից:⁹⁰

40. Արտակ Այգավարդի Պետրոսյան

41. Դավիթ Ռազմիկի Հայրապետյան

42. Միշա Կամոյի Աղաջանյան

2016 թ. ապրիլի 4-ին, Մարտակերտի ուղղությամբ տեղակայված պաշտպանական դիրքերում խոցվել է ՀՀ ՋՈՍ տանկերից մեկը: Զոհվել են անձնակազմի 3 անդամները՝ պարտադիր ժամկետային զինծառայողներ, տանկի մեխանիկ վարորդ շարքային Արտակ Այգավարդի Պետրոսյանը, տանկի օպերատոր-նշանառու, շարքային Դավիթ Ռազմիկի Հայրապետյանը և շարքային Միշա Կամոյի Աղաջանյանը:

Ըստ ծնողներին հայտնած պաշտոնական վարկածի՝ Արտակ Պետրոսյանը, Միշա Աղաջանյանը և Դավիթ Հայրապետյանը եղել են մեկ տանկի մեջ: Նրանց տանկը և ևս 2 տանկ Մատադիսի շրջանի մարտական դիրքերում առաջ են շարժվել մինչև չեզոք գոտի, որպեսզի հնարավորություն տան մյուս տանկերին ազատվել

⁸⁹ <http://www.aravot.am/2016/04/09/677611/>

⁹⁰ <http://168.am/2016/07/13/660934.html>

շրջափակումից: Նրանց տանկը խոցվել է, և զինվորներից ոչ մեկին չի հաջողվել փրկվել:

43. Արգիշտի Արծվիի Գաբոյան

Կապիտան Արգիշտի Արծվիի Գաբոյանը զոհվել է 2016թ. ապրիլի 4-ին Թալիշի մարտական դիրքերում:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների այցելության ժամանակ Արգիշտի Գաբոյանի հայրը՝ պայմանագրային զինծառայող Արծվի Գաբոյանը, ով ռազմական գործողությունների ժամանակ եղել է Թալիշի առաջնագծում և մասնակցել մարտական գործողություններին, հայտնեց, որ ապրիլի 4-ին Արգիշտին իր դասակի տղաների հետ առաջ է շարժվել նախորդ օրերին հակառակորդի կողմից գրավված դիրքը ազատագրելու և այնտեղ գտնվող զոհված ծառայակիցների մարմինները հանելու նպատակով: Հայրը իր հսկողության տակ գտնվող դիտակետից տեսել է, թե ինչպես առավոտյան 8:30-ի կողմերը Արգիշտին 6 հոգանոց խմբով փորձել է դուրս բերել նույն օրը ժամեր առաջ մարտում զոհված իր դասակի հրամանատար գյումրեցի Հրաչ Գալստյանի դին: Անցել է 10 րոպե, սկսվել է ուժեղ հրաձգություն ու դադարել է, ապա նոնակի պայթյուն է լսվել: Դրանից հետո մինչև ապրիլի 20-ը Արգիշտիից որևէ լուր չի եղել: Հայրը պատմեց որ, այդ օրերին ոչ հետախույզները, ոչ էլ նկարող սարքերը նրա մարմինը չեն տեսել, կասկած է եղել, որ Արգիշտին գերևարվել է:

Ապրիլի 20-ին ժամը 16:00-ին համաձայն Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի միջև ձեռք բերված պայմանավորվածության, Բաշ Քարվենդ բնակավայրի մոտակայքում ադրբեջանական կողմը ԼՂՀ-ին է հանձնել զոհված զինծառայողի մարմինը:⁹¹

44. Գևորգ Գագիկի Վարդանյան

2016 թ. ապրիլի 3-ի լույս 4-ի գիշերը հյուսիսային սահմանի Թալիշի հատվածում ընթացող մարտերի ժամանակ զոհվել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Գևորգ Գագիկի Վարդանյանը:

⁹¹ <http://www.a1plus.am/1450501.html>

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Գևորգ Վարդանյանի հոր՝ Գագիկ Վարդանյանի ցանկությամբ, հարուցված քրեական գործի շրջանականերում իրականացնելու է տուժողի իրավահաջորդի իրավունքների պաշտպանությունը՝ հանդես գալով որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ:

45. Վրեժ Վարդանի Սարգսյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 4-ին Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում:

Պայմանագրային զինձառայող էր՝ կրտսեր սերժանտ:

Պայմանագրային զինձառայող, կրտսեր սերժանտ Վրեժ Վարդանի Սարգսյանը մահացու վիրավորում է ստացել ականի պայթյունից ապրիլի 4-ի առավոտյան ժամը 6:30-ին, Թալիշի ուղղությամբ մարտական գործողությունների ժամանակ: Ապրիլի 1-ին, ավարտելով հերթափոխը պիտի տուն գար, սակայն ապրիլի 2-ից նրանց վաշտը տազնապով տեղափոխվել է Թալիշ, մասնակցել է ռազմական գործողություններին: Թալիշում նրա հետ միասին մարտերին մասնակցել է նաև եղբայրը, ով պարտադիր ժամկետային զինձառայող է: Վերջինս ինքն է եղբոր մարմինը բերել Հայաստան:

Ամուսնացած էր, ունի 1 երեխա: Պարգատրվել է «Մարտական ծառայություն» շքանշանով ԼՂ-ի և «Արիություն» շքանշանով՝ ՀՀ ՊՆ-ի կողմի:

46. Հարություն Հովհաննեսի Աբրահամյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 4-ին Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում:

Պայմանագրային զինձառայող, շարքային:

Պայմանագրային զինձառայող, շարքային, դիպուկահար Հարություն Աբրահամյանը զոհվել է ապրիլի 4-ին Թալիշի շրջանում, հրետանակոծության հետևանքով: Ամուսնացած էր, ունի երեք երեխա: ՀՀ ՊՆ-ի և ԼՂ-ի կողմից պարգատրվել է «Արիություն» շքանշաններով:

47. Սարգիս Արմենակի Սահակյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 4-ին Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում: Պարտադիր ժամկետային զինձառայող էր, շարքային:

Լրատվական միջոցները կամ պաշտոնական այլ աղբյուրներ դեպքի և մահվան հանգամանքների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարկել:

48. Սարգիս Լազրի Խալաֆյան

Ջոհվել է 2016 թ. ապրիլի 4-ին Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում: Ազատամարտիկ ծառայակիցների հետ ապրիլի 2-ին կամավոր մեկնել են Թալիշ, մասնակցելու պաշտպանական մարտերին:

Մարմինը Երևան է բերվել միայն ապրիլի 12-ին: Ամուսնացած էր, ունի 4 երեխա: ՀՀ ՊՆ-ի կողմից պարգևատրվել է «Արիություն», իսկ ԼՂ-ի կողմից «Մարտական ծառայություն» շքանշաններով:

49. Մայիս Երջանիկի Միրզոյան

50. Էդուարդ Յուրիկի Ալեքսանյան

51. Արմեն Մինասի Բեգլարյան

52. Սերգեյ Գուրգենի Դանդայան

53. Եդիշե Արտավազի Նիկայան

54. Դավիթ Բագրատի Սարգսյան

55. Սեդրակ Սերգեյի Ասրյան

56. Կարո Ծերունիի Համբարձումյան

57. Արմեն Արեգի Հովհաննիսյան

Ապրիլի 4-ին՝ ժամը 3-4 սահմաններում, հակառակորդը Մարտակերտի ճանապարհին անօդաչու սարքով ռմբակոծել է Միսիանի կամավորականներին առաջնագիծ տեղափոխող ավտոբուսը, 9-ից 7 հոգին տեղում զոհվել են, մյուս 2-ը՝ վիրավորվել:⁹²

Օրեր անց հիմանդանոցում մահացել է Արմեն Արեգի Հովհաննիսյանը, իսկ ապրիլի 21-ին «Աստղիկ» բժշկական կենտրոնում՝ Կարո Ծերունիի Համբարձումյանը:

58. Վարդան Սուրիկի Թադևոսյան

2016 թ. ապրիլի 4-ին, Ջաբրայիլի մարտական դիրքերում զոհվել է պայամանագրային զինծառայող, շարքային Վարդան Սուրիկի Թադևոսյանը:

⁹² <http://blognews.am/arm/press/357918/avtobusi-rmbakotsutyam-hetevanqov-zohvats-sisianci-kamavorneri-atchyunnery-handzvecin-hoxin-lusankarner.html>

Վարդանը եղել է հետախույզ-դիպուկահար, ապրիլի 1-ի հերթափոխի ժամանակ բարձրացել է դիրքեր: Ընտանիքն ապրել է Ջաբրայիլում, որտեղ էլ հենց դեպքի օրն իմացել են Վարդանի զոհվելու լուրը: Վարդանի հայրը աշխատել է Ջաբրայիլի զինվորական հոսպիտալու որպես էլեկտիկ և առաջինն է տեղեկացել որդու մահվան մասին: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների հետ զրույցում Սուրիկ Թադևոսյանը տեղեկացրեց, որ Վարդանը և նրա ծառայակիցները ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերվա հարձակման ժամանակ կապի միջոցով մի քանի անագմ օգնություն են խնդրել հրամանատարական շտաբից, սակայն ստացել են հետևյալ պատասխանը՝ «...սպասեք լույսը բացվի, տեսնենք ինչ ենք անում...»:

Վարդանն ամուսնացած էր, ունի 2 երեխա:

59. Արամ Արայիկի Աբրահամյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 4-ին Ջաբրայիլի մարտական հենակետում:

Պարտադիր ժամկետային զինծառայող էր, շարքային:

Ընտանիքի անդամները Արամի զոհվելու հանգամանքների մասին որևէ տեղեկատվություն չունեն:

60. Արամայիս Գրիգորի Միքայելյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 4-ին Ջաբրայիլի մարտական հենակետում:

Պարտադիր ժամկետային զինծառայող էր, շարքային:

Լրատվական միջոցները կամ պաշտոնական այլ աղբյուրներ դեպքի և մահվան հանգամանքների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարկել:

61. Հենրիկ Ռուդոլֆի Ղահրամանյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվածում Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում:

Պարտադիր ժամկետային զինծառայող էր, կրտսեր սերժանտ:

Զոհվել է մարտադաշտից վիրավոր և զոհված զինխառայողների մարմինները հանելու ժամանակ: Մահվան հստակ օր նշված չէ նույնիսկ մահվան վկայականում:

62. Նարեկ Վարդանի Մկրտչյան

Ձեռնվել է 2016 թ. ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվածում, դիպուկահարի կրակոցից՝ հարավային սահման:

Պարտադիր ժամկետային զինծառայող էր, շարքային:

Լրատվական միջոցները կամ պաշտոնական այլ աղբյուրներ դեպքի և մահվան հանգամանքների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարկել:

63. Նորիկ Ժորայի Գասպարյան

Ձեռնվել է 2016 թ. ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվածում:

Պարտադիր ժամկետային զինծառայող էր, սերժանտ:

Լրատվական միջոցները կամ պաշտոնական այլ աղբյուրներ դեպքի և մահվան հանգամանքների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարկել:

64. Գագիկ Կոլյայի Փարսադանյան

Ձեռնվել է 2016 թ. ապրիլի 4-ին: Կամավորական էր:

Լրատվական միջոցները կամ պաշտոնական այլ աղբյուրներ դեպքի և մահվան հանգամանքների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարկել:

65. Գոռ Կարապետի Կիրակոսյան

Ձեռնվել է 2016 թ. ապրիլի 5-ին Մատադիսի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում: Պարտադիր ժամկետային զինծառայող էր, շարքային:

Գոռ Կիրակոսյանը ծառայել է Մատադիսի գորամասում, սննդի մեքենայի վարորդ, նաև գորմասի էլեկտրիկն ու ավտոմեխանիկն էր: Դեպքը տեղի է ունեցել ապրիլի 5-ի կեսօրին, հրադադարի բանավոր պայմանավորվածության կնքումից 30 րոպե առաջ: Դեպքը տեղի է ունեցել սնունդը դիրքեր տանելու ճանապարհին: ՀՀ և ԼՂ պաշտպանության նախարարությունների կողմից պարզևատրվել է «Մարտական ծառայություն» շքանշաններով:

66. Ռուդիկ Բախշիի Մովսեսյան

Ձեռնվել է 2016 թ. ապրիլի 2-ին: Մայրը էր, զինված ուժերում՝ 1994թ-ից:

Լրատվական միջոցները կամ պաշտոնական այլ աղբյուրներ դեպքի և մահվան հանգամանքների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարկել:

67. Նորայր Միքայելի Հաջիյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 5-ին Թալիշի ուղղությամբ տեղակայված դիրքերի տարածքում: Կամավորագրվել և առաջնագիծ է մեկնել ապրիլի 2-ին:

Մարտական գործողություններին մասնակցել Թալիշի ուղղությունում, որտեղ և ապրիլի 4-ի լույս 5-ի գիշերը, թեժ մարտերի ընթացքում զոհվել է:

ԼՂՀ Նախագահի հրամանագրով 2016 թ-ի ապրիլի 5-ին հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

68. Մասիս Միքայելի Թովմասյան

Մահվան օրը և տեղանքը հայտնի չէ: Մասիս Թովմասյանը կամավորական էր:

69. Հովսեփ Ռաֆայելի Մայիլյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 4-ին՝ Հաղորություն: Մայրը էր, զինված ուժերում՝ 1998 թ-ից:

Լրատվական միջոցները կամ պաշտոնական այլ աղբյուրներ դեպքի և մահվան հանգամանքների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարկել:

70. Անդրանիկ Մարատի Գրիգորյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվածում Հաղորթի մարտական հենակետում: Պայմանագրային զինծառայող, շարքային:

Լրատվական միջոցները կամ պաշտոնական այլ աղբյուրներ դեպքի և մահվան հանգամանքների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարկել:

71. Հայկ Ռոդիկի Գրիգորյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 2-ին՝ մահվան տեղանքի մասին տեղեկատվությունը բացակայում է: Տանկային վաշտի առաջին տանկային դասակի հրամանատար: Զինված ուժերում էր 2010 թ.-ից, լեյտենանտ էր:

Լրատվական միջոցները կամ պաշտոնական այլ աղբյուրներ դեպքի և մահվան հանգամանքների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարկել:

72. Վլադիմիր Ստեփանի Նարինյան

Զոհվել է 2016 թ. ապրիլի 5-ին՝ մահվան տեղանքի մասին տեղեկատվությունը բացակայում է: Պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ էր:

Լրատվական միջոցները կամ պաշտոնական այլ աղբյուրներ դեպքի և մահվան հանգամանքների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարկել:

73. Նվեր Սարոյի Սիմոնյան

Ձոհվել է 2016 թ. ապրիլի 4-ին՝ հարավային ուղղությամբ տեղակայված հենակետ՝ Ջարրայիլ:

Պայամանգրային զինծառայող, ավագ սերժանտ, Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի N զորամասի հատուկ նշանակության վաշտի 1-ին խմբի 1-ին ջոկի հրամանատարն էր, հետախույզ գնդացրորդ-դիպուկահար:

74. Ղարիբ Հայասերի Սահակյան

Ձոհվել է 2016 թ. ապրիլի 2-5-ն ընկած ժամանակատվածում՝ հարավային ուղղությամբ տեղակայված հենակետ: Պայամանգրային զինծառայող, ավագ սերժանտ էր:

Լրատվական միջոցները կամ պաշտոնական այլ աղբյուրներ դեպքի և մահվան հանգամանքների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարկել:

75. Ազնաուր Ռաֆիկի Բալայան

Ձոհվել է 2016 թ. ապրիլի 4-ին՝ հարավային ուղղությամբ տեղակայված հենակետում:

Պայամանգրային զինծառայող էր, շարքային:

Լրատվական միջոցները կամ պաշտոնական այլ աղբյուրներ դեպքի և մահվան հանգամանքների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարկել:

76. Յուրի Անատոլիի Փարամազյան

Ձոհվել է 2016 թ. ապրիլի 2-ին՝ Մարտունու ուղղությամբ տեղակայված հենակետում: Պարտադիր ժամկետային զինծառայող էր՝ կրտսեր սերժանտ, զոհվել է զինծառայակից ընկերները կյանքը փրկելու ժամանակ:

Լրատվական միջոցները կամ պաշտոնական այլ աղբյուրներ դեպքի և մահվան հանգամանքների վերաբերյալ մանրամասներ չեն հրապարկել:

77. Դավիթ Յուրիի Գասպարյան

Չոհվել է 2016 թ. ապրիլի 4-ին՝ մահվան տեղանքի մասին տեղեկատվությունը բացակայում է: Ավագ ենթասպա, զինաձուլում էր 2009 թ-ից:

Բ. Դժբախտ պատահար

Ավտովթար

1. **Կարեն Իշխանի Կարապետյան** (պայմանագրային զինծառայող)
2. **Վահան Մնացականի Ղուկասյան** (պայմանագրային զինծառայող)
3. **Ռուսլան Ռաֆայելի Հարությունյան** (պայմանագրային զինծառայող)

2016 թ. մարտի 9-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ թիվ N գորամասի պայմանագրային զինծառայող Կ. Կարապետյանի վարած «Օպել-Վեկտրա» մակնիշի ավտոմեքենան Եղեգնաձոր-Երևան ավտոճանապարհի Տիգրանաշեն գյուղի հատվածում դուրս է եկել երթևեկելի մասից եւ մոտ 350 մետր զլորվելով ընկել է ձորը: Վթարի պահին ավտոմեքենայում գտնվող 5 ուղևորներից 3-ը՝ եղբայրներ են եղել: Ավտովթարի հետևանքով վարորդը՝ Կարեն Կարապետյանը, ուղևորներ Վահան Ղուկասյանը, եղբայրներից մեկը՝ Ռուսլան Հարությունյանը մահացել են, իսկ մյուս ուղևորներ՝ եղբայրներ Ռոման և Արկադի Հարությունյանները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են ՀՀ ՊՆ Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ: Հոսպիտալի պետ Արամ Ասատուրյանի խոսքերով զինծառայողների վիճակը ծանր է եղել, նրանք բազմաթիվ կոտրվածքներ և սալջարդեր են ստացել:⁹³

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Արարատի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով (ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ):⁹⁴

4. Արսեն Հովսեփյան

2016 թ-ի մարտի 23-ի գիշերը 04:30-ի սահմաններում, Մասիս-Էջմիածին ավտոճանապարհի 4-րդ կմ-ին՝ Արարատի մարզի Սայաթ-Նովա գյուղի

⁹³ <http://news.am/arm/news/316121.html>

⁹⁴ <http://investigative.am/news/view/zincarayoxner-vtar-ararat.html>

խաչմերուկում «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի հատվածից և բախվել գազատար խողովակին:

Ավտովթարի արդյունքում մահացել են ժամկետային զինծառայող 1997 թ. ծնված Արսեն Հովսեփյանը, 1995 թ. ծնված Լևոն Հովսեփյանը և ԱԻՆ աշխատակից 1993 թ. ծնված Սարգիս Բադալյանը:⁹⁵ Նրանք Արարատի մարզի Արբաթ գյուղի բնակիչներ են: Արսեն եւ Լևոն Հովսեփյանները եղբայրներ էին: Դեպքի առնչությամբ ՊՆ-ն պաշտոնական հաղորդագրություն չի տարածել, սակայն Ռազմինֆոյի⁹⁶ հետ զրույցում ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը հաստատել է տեղեկությունը, որ ավտովթարի զոհերից Արսեն Հովսեփյանը ժամկետային զինծառայող էր և գտնվում էր արձակուրդում:

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչությունում քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով՝ 3 անձի մահվան պատճառ դարձած ավտովթարի պատճառները պարզելու համար: Կատարվում է նախաքննություն:⁹⁷

5. Դավիթ Աշոտի Սաֆարյան

2016 թ. օգոստոսի 5-ին՝ ժամը 11:15-ի սահմաններում, ճանապարհի ոլորանների հատվածում «ԳԱԶ 33081» մակնիշի մեքենան դուրս է եկել երթևեկելի հատվածից եւ վթարի ենթարկվել: Վթարի հետեւանքով ստացած մարմնական վնասվածքներից մահացել է մեքենայի թափքում գտնվող, նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Դավիթ Աշոտի Սաֆարյանը:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:⁹⁸

6. Վաչագան Հայրապետյան

2016 թ. հոկտեմբերի 10-ին՝ ժամը 14:10-ի սահմաններում, Երևան-Սևան -Իջևան ավտոճանապարհի 120-րդ կ/մ հատվածում Իջևան քաղաքի բնակիչ Ա. Աթաբեկյանի վարած «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան բախվել է հանդիպակաց երթևեկող, Վաչագան Հայրապետյանի վարած «Վագ 2107» մակնիշի ավտոմեքենային, որի

⁹⁵ http://mes.am/hy/accidents/item/2016/03/23/chtar_ararat_2/

⁹⁶ <http://razm.info/81254>

⁹⁷ <http://investigative.am/news/view/mahvan-elqov-vtar-ararat.html>

⁹⁸ <http://news.am/arm/news/340781.html>

հետևանքով պայամանագրային զինծառայող, կապիտան Վաչագան Հայրապետյանը տեղում մահացել է:⁹⁹

Ըստ ՀՀ Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության՝ դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով (Ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անգոյություն ունի առաջացրել է մարդու մահ): Կատարվում է նախաքննություն:¹⁰⁰

7. Դավիթ Վարդանյան

2016թ. հոկտեմբերի 27-ին՝ ժամը 01-ի սահմաններում, Արարատ քաղաքի բնակիչ, ժամկետային զինծառայող, 19-ամյա Դավիթ Վարդանյանի վարած «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենան, Արարատ քաղաքում երթևեկելիս, դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից, բախվել էլեկտրասայանը, այնուհետև՝ հաստաբուն ծառին, ինչի հետևանքով Դ.Վարդանյանը ստացած մարմնական վնասվածքներից տեղում մահացել է:

ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության Արարատի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով: Կատարվում է նախաքննություն:¹⁰¹

8. Արմեն Վեսմիրի Մուսիկյան

9. Ալեքսան Լվերի Միմոնյան

2016 թ. դեկտեմբերի 8-ին՝ ժամը 11:40-ի սահմաններում Lexus մակնիշի ՊՆ 0001 համարանիշի ավտոմեքենայի վարորդը Երևան-Մեղրի ավտոճանապարհի 231-րդ կմ հատվածում դուրս է եկել ճանապարհի երթևեկելի գոտուց և մոտ 40 մետր զլորվելով՝ հայտնվել ձորակում: Դեպքի հետևանքով տեղում մահացել է ՊՆ N գորամասի զինծառայող ավագ վարորդ, լեյտենանտ Արմեն Վեսմիրի Մուսիկյանը, իսկ ուղևոր՝ նույն գորամասի զինծառայող ավագ սպա, կապիտան Ալեքսան Լվերի Միմոնյանը, ստացած վնասվածքներից մահացել է «Գորիս բժշկական կենտրոն» ՓԲԸ տեղափոխելու ճանապարհին:

⁹⁹ <http://news.am/arm/news/351018.html>

¹⁰⁰ <http://investigative.am/news/view/vtar-erevan-sevan-ijevan.html>

¹⁰¹ <http://investigative.am/news/view/zincarayox-vtar-ararat.html>

Դեպքի առթիվ ՀՀ Քննչական կոմիտեն տարածել է հաղորդագրություն, որում ասվում է, որ զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով, կատարվում է նախաքննություն:¹⁰²

Մեքենաները վարելու, շահագործելու կանոնների խախտում

1. Վարդան Լևիկի Մաթևոսյան

Ժամկետային զինծառայող, շարքային, գոհվել է 2016 թ. ապրիլի 8-ին ՊՆ զորամասերից մեկի «Ուրալ» մակնիշի ավտոմեքենայի Արարատի մարզի Արմաշ գյուղ տանող ավտոճանապարհի երթևեկելի մասից դուրս գալու և շուրջ 200 մետր ձորը զորովելու հետևանքով:

Ավտոմեքենայում գտնվել է 11 զինծառայող, որոնցից պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Վարդան Լևիկի Մաթևոսյանը տեղում մահացել է, 6-ը՝ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով, տեղափոխվել Արարատի բժշկական կենտրոն: Մյուս 4 զինծառայողներին հոսպիտալացնելու անհրաժեշտություն չի եղել:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ ութերորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով, կատարվել է դեպքի վայրի զննություն: Քննություն է տարվում՝ պարզելու վթարի պատճառները:

2017 թ-ի հունվարի 11-ին ՀՀ Քննչական կոմիտեի կողմից տարածված տեղեկատվության համաձայն գործով իրականացվող նախաքննությունն ավարտվել է և քրեական գործը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին:

Ըստ հրապարակված տեղեկատվության իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ ՀՀ ՊՆ N զորամասի նյութաապահովման վաշտի պայմանագրային զինծառայող, վարորդ Ա. Ազիզյանի, ավտոճառայության պետ, մայոր Կ.Վահանյանի, տեխնիկական ստուգման հսկիչ տեխնիկական կետի պետ, ենթասպա Հ.Հովհաննիսյանի կողմից ավտոմեքենայի շահագործման կանոնները խախտելու

¹⁰² <http://investigative.am/news/view/vtar-zinvorakan1.html>

հետևանքով «Ուրալ» մականիշի ավտոմեքենան շահագործվել է՝ արգելակման համակարգի անսարք լինելով հանդերձ:

Բացի այդ, նույն գորամասի 3-րդ գումարտակի հրամանատարի թիկունքի գծով տեղակալ, մայոր Գ.Գևորգյանի կողմից պաշտոնեական դիրքը չարաշահելու հետևանքով մարտական դիրքից գույքը և հերթապահություն իրականացնող անձնակազմը գորամաս են տեղափոխվել բեռնատար ավտոմեքենան համապատասխան նստարաններով չկահավորված և թափքը գույքով բեռնված:

Ձեռք բերված ապացույցների համակցությամբ՝ Ա.Ազիզյանին, Կ.Վահանյանին, Հ.Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով (մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ), Գ.Գևորգյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական դիրքը չարաշահելը, եթե դրանք էական վնաս են պատճառել):¹⁰³

2. Գառնիկ Համլետի Ավետիսյան

2016 թ. ապրիլի 11-ին զինճառայողը մնացել է քարշակող և քարշակվող «Զիլ-131» մականիշի մեքենաների արանքում, որից քիչ անց՝ Դիլիջանի բժշկական կենտրոն տեղափոխվելու ճանապարհին, մահացել է:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական ծառայության վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:¹⁰⁴

Հոսանքահարում

3. Սարգիս Սմբատի Մանուկյան

2016 թ. մարտի 30-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N գորամասի 4-րդ պահակակետի տարածքում գտնվող էլեկտրական կայանի ներսում հայտնաբերվել է պահակակետի վերակարգում գտնվող պարտադիր ժամկետային զինճառայող, շարքային Սարգիս Սմբատի Մանուկյանը անզիտակից վիճակում՝ էլեկտրահարված: Ս.Մանուկյանն Արարատի բժշկական կենտրոն տեղափոխվելու ճանապարհին մահացել է:¹⁰⁵

¹⁰³ <http://investigative.am/news/view/ural-vtar-mexadrakan.html>

¹⁰⁴ <http://investigative.am/news/view/zincarayox-garnik-avetisyan.html>

¹⁰⁵ <http://www.lin.am/1879130.html>

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ութերորդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով (անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ՝ եթե անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ):

Ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ՝ դեպքի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումն ապահովելու համար:¹⁰⁶

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի գնահատմամբ՝¹⁰⁷ տարօրինակ է, երբ զինծառայողը հոսանքահարվում է եւ անհասկանալի է, թե ինչու պետք է զինծառայողը հայտնվի այնպիսի իրադրության մեջ, որ գործ ունենա հոսանքի հետ: Նման իրավիճակները, ըստ կազմակերպության ղեկավարի, առավել մեծ կասկածներ են առաջացնում մահվան հանգամանքի հետ կապված, առավել եւս, եթե վարկածը առաջադրվում է դեռեւս քննություն չիրականացնելով: Նշված դեպքի հետ զուգահեռներ են անցկացվում նաեւ դեռեւս 2007 թվականի օգոստոսի 30-ի միջադեպը, երբ կրկին նախապես պաշտոնական վարկած հրապարակվեց, որ ՊՆ զորամասերից մեկում էլեկտրահարումից մահացել է զինծառայող Տիգրան Օհանջանյանը:

Սակայն զինծառայողի հարազատները պնդում էին, որ Տիգրանին սպանել են: Տիգրանի մահվան համար նախաքննական մարմինը ծառայողական անփութության համար մեղադրանք էր առաջադրել զորամասի կապի հանգույցի պետ Ռուստամ Ասատրյանին և նույն հանգույցի ծառայող Կարեն Թովմասյանին, որոնց, սակայն, Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանն արդարացրեց, նրանց նկատմամբ քրեական հետապնդումը վերացրեց և գործն ուղարկեց նոր քննության:

Իրավապաշտպան Ռուբեն Մարտիրոսյանը, ԳԱԼԱ-ի հետ զրույցում անդրադառնալով տեղի ունեցած միջադեպին, նշել է, որ Քննիչն իրավասու չէ, մասնագետ չէ և չի կարող նման եզրակացություն տալ: Դա կարծիք է ընդամենը: Վերջնական կարծիք կարելի է հայտնել միայն օբյեկտիվ դիագնոստիկ հետո, թե կատարվածը պատահականություն է եղել, թե՞ դիտավորություն: Ցանկացած անձի կարելի է ստիպողաբար հոսանքահարել: Այս պահի դրությամբ ավելին ասել հնարավոր չէ, որովհետև օբյեկտիվ չի լինի»:¹⁰⁸

¹⁰⁶ <http://investigative.am/news/view/zincarayox-sargis-manukyan.html>

¹⁰⁷ <http://galatv.am/hy/news/143561/>

¹⁰⁸ <http://galatv.am/hy/news/143561/>

4. Կարեն Պարզևի Դավթյան

Հերթափոխը հանձնելուց հետո՝ ապրիլի 5-ին, հետդարձի ճանապարհին սարերի գագաթից կուտակված ձնահոսքից գահավիժել է ցած, ինչի հետևանքով հայտնվել է ձնակույտի շրջապատւյտում ու շուրջ 100 մետր գլորվել է ցած և մահացել.¹⁰⁹

Պայմանագրային զինձառայող էր, շարքային:

Բնական աղետ

5. Արմեն Պավելի Գագարյան

6. Վարդան Կարապետի Դրմաջյան

2016 թ. հունիսի 8-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում տեղացած առատ անձրևից առաջացած ջրհեղեղի, ուժեղ քամու հետևանքով Ջարլրայիլի դիրքում ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ անհայտ կորել են Կուրաթլույր գորամասի ժամկետային զինձառայողներ՝ կրտսեր սերժանտ Վարդան Կարապետի Դրմաջյանը և շարքային Արմեն Պավելի Գագարյանը:

Երկրորդ կայագրային քննչական բաժնում դեպքի առթիվ նախապատրաստվում են նյութեր:¹¹⁰ Դեպքի վերաբերյալ հարուցված քրեական գործով կատարվող նախաքննության վերաբերյալ պաշտոնական այլ տեղեկատվություն չի տարածվել:

Փլուզում

7. Կորյուն Կամոյի Հարությունյան

8. Իգոր Պապի Հակոբյան

2016 թ. մայիսի 3-ին՝ ժամը 00:20-ի սահմաններում, N գորամասում հայտնաբերվել են ժամկետային զինձառայողներ, շարքայիններ Իգոր Հակոբյանի և Կորյուն Հարությունյանի դիերը: Արտաքին գննությամբ հրազենային, բեկորային վնասվածքներ, բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

Հետազայում պարզ դարձավ, որ զինձառայողները մահացել են, իրենց իսկ կողմից փորված «բլինդաժի» բլուզման պատճառով: Վերջիններս քնած էին եղել այդ «բլինդաժում»:

¹⁰⁹ <http://www.aravot.am/2016/04/04/674829/>

¹¹⁰ <http://investigative.am/news/view/djbaxt-depq.html>

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների հետ հանդիպման ժամանակ Իգոր Հակոբյանի հայրը նշեց, որ հարուցվել է քրեական գործ, որով ինքը դեռևս տուժողի իրավահաջորդ չի ճանաչվել:

Ջրահեղձում

9. Էդգար Չախյան

2016 թ. հունիսի 29-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում Երևան քաղաքի Պալիզոն կոչվող թաղամասի արհեստական ջրամբարում հայտնաբերվել է պարտադիր ժամկետային զինձառայող Էդգար Չախյանի մարմինը՝ ջրահեղձ եղած վիճակում:¹¹¹

ՀՀ քննչական կոմիտեի Երևանի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում դեպքի առիթով նյութեր են նախապատրաստվում:

Ռազմինֆոյի հետ զրույցում ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը հայտնել է, որ ջրահեղձ եղածը ՀՀ զինված ուժերի զինձառայող էր:¹¹²

Ականի պայթյուն

10. Գևորգ Արթուրի Հարությունյան

2016 թ. Օգոստոսի 2-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում ականապայթյունային մահացու վիրավորում է ստացել զինձառայող, 1996թ. ծնված Գևորգ Արթուրի Հարությունյանը:

Դեպքի վերաբերյալ հարուցված քրեական գործով կատարվող նախաքննության վերաբերյալ պաշտոնական այլ տեղեկատվություն չի տարածվել:¹¹³

Գ. Սպանություն

Դիտավորյալ սպանություն

1. Կամո Արայի Հովհաննիսյան

2016 թ-ի փետրվարի 19-ին, ժամը 07:00-ի սահմաններում, ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում տեղի

¹¹¹ <http://www.mes.am/hy/accidents/item/2016/06/29/14526/>

¹¹² <http://razm.info/85138>

¹¹³ <http://nkrmil.am/news/view/1427>

*ունեցած արտակարգ պատահարի արդյունքում հրազենային մահացու վիրավորում են ստացել ՊԲ զինծառայողներ, 1997 թ. ծնված Կամո Արայի Հովհաննիսյանը և Թեմուր Շարիի Սուլոյանը:*¹¹⁴

Զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 110-րդ հոդվածի 1-ին մասով: Նախնական տվյալներով՝ 2016 թվականի փետրվարի 19-ին՝ ժամը 06:50-ի սահմաններում, N գորամասի 3-րդ ջոկի գնդացրորդ, շարքային Թ.Սլոյանը, նույն գորամասի պահպանության տակ գտնվող մարտական դիրքի դիտակետի մոտ իրեն ամրակցված գնդացրից կրակել է նույն ջոկի հրամանատար, մարտական դիրքի ավագ, կրտսեր սերժանտ Կամո Հովհաննիսյանի դեմքի շրջանին: Ստացած վնասվածքից Կ.Հովհաննիսյանը տեղում մահացել է, որից հետո շարքային Սլոյանը ինքն իրեն գլխի շրջանում պատճառել է հրազենային մահացու վիրավորում:¹¹⁵

Կամո Հովհաննիսյանը ԼՂՀ Շահումյանի շրջանի Նոր Էրքեջ գյուղի գյուղապետի որդին էր: Ըստ Yerkir.am լրատվական կայքի որոշ տեղեկությունների համաձայն՝ Թեմուրը դեպքից երկու օր առաջ՝ իր հերթապահության օրը, լքել է մարտական հենակետը, ինչը խոսակցության առիթ է դարձել: ՀՅԴ Արցախի կենտրոնական կոմիտեի անդամ Ժիրայր Շահիջանյանը, ով Կամոյին ճանաչել է դեռ մանուկ հասակից Yerkir.am-ի հետ զրույցում պատմել է.

«Դեպքի օրն էլ ասել է, որ փորն է ցավում, թող իրեն փոխի: Կամոն էլ ուրիշ զինվորի է կանչել՝ փոխարինելու, հետո թե ի՞նչ խոսակցություն է եղել, չգիտենք: Այդ ընթացքում դեպքը տեղի է ունեցել: Այնտեղ ևս մի զինվոր է ներկա եղել», - պատմել է Շահիջանյանը՝ հավելելով, որ քննությունը կպարզի, թե ինչ է իրականում տեղի ունեցել: Անդրադառնալով այն տեղեկությանը, թե իբր Կամոն ճնշել է Թեմուրին, Շահիջանյանն ասել է, որ նման բան չի եղել: «Կամոն իրեն շատ համեստ է պահել, հրամանատարական կազմի կողմից շատ լավ է բնութագրվում, նա ի՞նչ թափ պետք է ունենար, որ փորձեր մյուսին ճնշել»: ¹¹⁶

¹¹⁴ <http://www.lragir.am/index/arm/1/country/view/128037>

¹¹⁵ <http://investigative.am/news/view/erku-zincarayoxi-mah.html>

¹¹⁶ <http://www.yerkir.am/news/view/101611.html>

2. Վահագն Գագիկի Վիրաբյան

2016 թ. հոկտեմբերի 15-ին՝ ժամը 08:40-ի սահմաններում, հակամարտ գորքերի շփման գծի հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, 1997 թ. ծնված Վահագն Գագիկի Վիրաբյանը:¹¹⁷

2016 թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության համաձայն՝ N զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքում հերթապահության նշանակված ժամկետային զինծառայող, շարքային Վահագն Գագիկի Վիրաբյանի ուղղությամբ արձակվել են կրակոցներ՝ վերջինիս պատճառելով մահացու հրազենային վիրավորումներ: Նույն օրը երկրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:¹¹⁸

2016 թ. հոկտեմբերի 17-ին ՀՀ Քննչական կոմիտեն տարածել է ևս մեկ հաղորդագրություն, որով հայտնել է, որ ժամկետային զինծառայող՝ շարքային Վահագն Գագիկի Վիրաբյանի ուղղությամբ կրակահերթ է արձակել նույն զորամասի մեկ այլ շարքային զինծառայող՝ իրեն ամրակցված ինքնաձիգից: Կասկածյալը ձերբակալվել է:

ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:¹¹⁹

Կանոնադրային հարաբերությունների խախտում

3. Գրիգոր Հերմոնի Ավետիսյան

4. Սուրեն Արթուրի Արամյան

2016 թ. ապրիլի 6-ին ՀՀ ՊՆ մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը իր ֆեյսբուքյան էջում տարածել է տեղեկատվություն, հաստատելով, որ Քարվաճառում տեղի է ունեցել դեպք, որի արդյունքում երկու զինծառայող են մահացել:

2016 թ. ապրիլի 14-ին ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 5-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով (երկու կամ ավելի անձանց սպանություն՝

¹¹⁷<http://nkrmil.am/news/view/1547>

¹¹⁸<http://investigative.am/news/view/mah-vahagn-virabyan.html>

¹¹⁹<http://investigative.am/news/view/vahagn-virabyan-mah-bacahaytum.html>

շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով): Ձերբակալվել է նույն գորամասի մեկ այլ ժամկետային զինծառայող:

Սուրեն Արամյանի ընտանիքի անդամները ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցների այցի ժամանակ հայտնեցին, որ դեպքը տեղի է ունեցել ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը Քարվաճառում, սակայն ընտանիքի անդամները դեպքի մանրամասներին չեն տիրապետում, ի տարբերություն նույն դեպքով մյուս մահացած զինծառայողի: Ըստ Սուրենի մոր հայտնած տեղեկատվության՝ քրեական գործով արդեն ձերբակալված սպան նախ կրակել է Գրիգորի վրա, ով գտնվել է վրանից դուրս, հետո կրակոցներ է արձակել վրանի ներսում, որտեղ էլ 2 մահացու վիրավորում է ստացել Սուրենը: Մահվան վկայականում, որպես մահվան պատճառ նշված է «Կյանքի հետ անհամատեղելի, կոպիտ մարմնական վնասվածքներ»:

Դեպքի մասին հարազատներին հայտնել են զինկոմիսարիատից՝ սկզբում նշելով, թե դիվերսիա է եղել, հետո պարզաբանել են:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը սկսել է զբաղվել Սուրեն Արամյանի ընտանիքի իրավունքների պաշտպանությամբ: Գործը դեռևս գտնվում է նախաքննության փուլում:

5. Հակոբ Արայիկի Գևորգյան

2016 թ. մայիսի 25-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ Սյունիքի մարզի N գորամասի բուժկետ է ընդունվել ժամկետային զինծառայող, սերժանտ Հակոբ Արայիկի Գևորգյանը՝ կրծքավանդակի առաջային պատի կտրած ծակած վերք ախտորոշմամբ: Վերջինս, «Մեղրու ԲԿ» տեղափոխվելու ճանապարհին՝ ժամը 15:55-ի սահմաններում, մահացել է:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԶԲԳՎ իններորդ կայազորային քննչական բաժնում նույն օրը հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի հատկանիշներով: Նախնական քննության տվյալներով՝ դեպքի օրը վիճաբանություն է տեղի ունեցել Հ.Գևորգյանի և նույն գորամասի մեկ այլ ժամկետային զինծառայողի՝ շարքային Գ.Կոստրոպյանի միջև: Վիճաբանությունը վերածվել է ծեծկոտուքի, որի ժամանակ վերջինս սուր կտրող ծակող գործիքով հարվածել է Հ. Գևորգյանի կրծքավանդակի հատվածին:¹²⁰

¹²⁰ <http://investigative.am/news/view/zincarayoxi-spanutyun.html>

Չենքի հետ վարվելու կանոնների խախտում

6. Հովհաննես Ռազմիկի Հարությունյան

2016 թ-ի մարտի 17-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում, ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում, Չենքի օգտագործման կանոնների խախտման արդյունքում, մահացու վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 1997 թ. ծնված Հովհաննես Ռազմիկի Հարությունյանը:¹²¹

Զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ Չենքի հետ վարվելու կանոնները խախտելու հետևանքով անզգուշությամբ զինծառայողի մահ առաջացնելու դեպքի առթիվ:¹²²

Նախնական տվյալներով՝ մարտական դիրքում թույլ է տրվել Չենքի հետ վարվելու կանոնների խախտում, որի պատճառով զինծառայող Հ.Հարությունյանը գլխի հատվածում ստացել է մահացու հրազենային վնասվածք:

Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ քննությամբ պարզվել է դեպքի պահին զինծառայողի հետ նույն մարտական դիրքի տարածքում գտնված զինծառայողների շրջանակը և ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական և դատավարական այլ գործողություններ՝ բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննությունն ապահովելու ուղղությամբ»:

Մարտի 22-ին ՀՀ Քննչական կոմիտեն հանդես եկավ նոր հայտարարությամբ՝ հերքելով նախորդ վարկածը, այն է. «մարտական դիրքում զինծառայող Հովհաննես Հարությունյանի՝ գլխի հատվածում մահացու հրազենային վնասվածք ստանալու դեպքի առթիվ զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնում հարուցված քրեական գործի նախաքննությամբ պարզվել են էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, և մեղադրանք առաջադրվել մարտական դիրքում նրա հետ ծառայություն իրականացրած մեկ այլ զինծառայողի: ¹²³

Նախաքննությամբ ձեռնարկված քննչական գործողությունների արդյունքում բավարար ապացույցներ են ձեռք բերվել առ այն, որ զինծառայող, կրտսեր սերժանտ Հ.Հարությունյանի վրա դիմահար կրակոց է արձակվել նույն մարտական դիրքում

¹²¹ <http://www.mil.am/hy/news/3921>

¹²² <http://investigative.am/news/view/zincarayox-harutyun-harutyunyan.html>

¹²³ <http://investigative.am/news/view/hovhannes-harutyunyan-spanutyun-mexadranq.html>

որպես դիտորդ ծառայություն իրականացրած, կոչումով շարքային մեկ այլ զինծառայողի՝ Երևանի 19-ամյա բնակիչ Միքայել Ջաքարյանի կողմից: Քննությամբ պարզվել է սպանության հանգեցրած վիճաբանության պատճառը:

Ձեռք բերված ապացույցների հիման վրա՝ շարքայինին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով (սպանություն, որը կատարվել է խուլիգանական դրդումներով): Քննիչը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է»:

Զինծառայողը, սակայն, չի ընդունում առաջադրված մեղադրանքն ու իր ցուցմունքում նշել է, որ Հարությունյանի հետ մոտ ընկերներ էին, և տեղի ունեցածը սպանություն չէ:¹²⁴

7. Կարեն Արսյուշի Աղաբեկյան

2016 թ. ապրիլի 21-ին՝ ժամը 14:30-ի սահմաններում, N գորմասի «ՈւԱԶ» մականիշի ավտոմեքենայի ուղևոր, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Պ.Եգորյանը, խախտելով զենքի հետ վարվելու կանոնները, ինքնաձիգից կրակոց է արձակել, որի հետևանքով նշված ավտոմեքենայի վարորդ, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Կարեն Արսյուշի Աղաբեկյանը կրծքավանդակի աջ կեսի շրջանում ստացել է մահացու հրազենային վիրավորում:

Առաջին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ զենքի հետ վարվելու կանոնները խախտելու հետևանքով անզգուշությամբ մարդու մահ առաջացնելու դեպքի առթիվ: Պ.Եգորյանը ձերբակալվել է:

Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է, կատարվում են անհրաժեշտ քննչական եւ դատավարական այլ միջոցառումներ՝ դեպքի բոլոր հանգամանքների բազմակողմանի, օբյեկտիվ եւ լրիվ հետազոտումն ապահովելու ուղղությամբ:¹²⁵

¹²⁴ <http://www.epress.am/2016/03/25/%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%B8%D6%80%D5%A8-%D5%BA%D5%B6%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7%D5%9D-%D5%A4%D5%AB%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B5%D5%A1%D5%AC-%D5%B9%D5%AB-%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A5.html>

¹²⁵ <http://investigative.am/news/view/karen-aghabeqyan-mah.html>

8. Գևորգ Աշոտի Մղդեսյան

2016 թ. ապրիլի 7-ին առաջնագծի հյուսիսարևելյան հատվածում, դեռևս լրիվությամբ չպարզված հանգամանքներում, մահացու հրազենային վիրավորում է ստացել 1996թ. ծնված շարքային զինծառայող Գևորգ Աշոտի Մղդեսյանը:

ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ 3-րդ կայագորային քննչական բաժնում քննվում Գևորգ Աշոտի Մղդեսյանի մահվան դեպքի առթիվ 2016 թվականի ապրիլի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցված թիվ 90859716 քրեական գործը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ստանձնել է Գևորգ Մղդեսյանի տուժողի իրավահաջորդ հանդիսացող Աշոտ Մղդեսյանի իրավունքների պաշտպանությունը և հանդես է գալիս, որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ: Ներկայումս հարուցված քրեական գործով իրականացվում է նախաքննություն, նշանակվել են մի շարք փորձաքննություններ:

9. Սպարտակ Դավիթի Քալաշյան

2016 թ. ապրիլի 21-ին՝ ժամը 07:00-ի սահմաններում, Մարտունի 3 գորամասի մարտական դիրքում պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Հ.Բարեյանը խախտելով զենքի հետ վարվելու կանոնները, իրեն ամրակցված ինքնաձիգը մաքրելու ժամանակ կրակոց է արձակել, որի հետևանքով գլխի շրջանում մահացու հրազենային վիրավորում է ստացել պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սպարտակ Քալաշյանը:

Առաջին կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ զենքի հետ վարվելու կանոնները խախտելու հետևանքով անզգուշությամբ մարդու մահ առաջացնելու դեպքի առթիվ: Հ.Բարեյանը ձերբակալվել է:

Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:¹²⁶ Դեպքի վերաբերյալ հարուցված քրեական գործով կատարվող նախաքննության վերաբերյալ պաշտոնական այլ տեղեկատվություն չի տարածվել:

¹²⁶ <http://investigative.am/news/view/spartak-qalashyan-mah.html>

10. Խորեն Դերենիկի Հարությունյան

2016 թ. հունիսի 2-ին՝ ժամը 09:15-ի սահմաններում, ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, 1997թ. ծնված Խորեն Դերենիկի Հարությունյանը:¹²⁷

Հարուցվել է քրեական գործ՝ զենքի հետ վարվելու կանոնները խախտելու և անզգուշությամբ մարդու մահ առաջացնելու դեպքի առթիվ, որն ընդունվել է երրորդ կայազորային քննչական բաժնի վարույթ:

ՀՀ Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրությամբ ասվում է, որ իրականացված քննչական գոծողությունների արդյունքում պարզվել է, որ Խ.Հարությունյանը մահացու հրազենային վնասվածքն ստացել է մարտական դիրքում կրտսեր սերժանտ Ա.Խաչատրյանի կողմից զենքի հետ վարվելու կանոնները խախտելու հետևանքով արձակված կրակոցից:

Կրտսեր սերժանտը ձերբակալվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարք կատարելու կասկածանքով (զենքի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ):¹²⁸

Դեպքով հարուցված քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

Դեռևս չհստակեցված հանգամանքներ

11. Սևակ Հովհաննեսի Համբարձումյան

2016 թ-ի մարտի 24-ին ՀՀ ՊՆ Կապանի գորամասի հրաձգարանում մահացու հրազենային վիրավորում է ստացել պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սևակ Հովհաննեսի Համբարձումյանը:¹²⁹

Դեպքի հանգամանքները պարզելու նպատակով քննություն է սկսվել ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 9-րդ կայազորային քննչական բաժնում:¹³⁰

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 9-րդ կայազորային քննչական բաժնում քննվող քրեական գործով ձերբակալվել է նույն գորամասի հրաձգային գումարտակի դյուրակիր զենիթային հրթիռային համալիրի

¹²⁷ <http://investigative.am/news/view/zinor-xorenharutyunyan-mah.html>

¹²⁸ <http://investigative.am/news/view/xoren-harutyunyan.html>

¹²⁹ <http://www.mil.am/hy/news/3928>

¹³⁰ <http://investigative.am/news/view/sevak-hambarcumyan.html>

հաշվարկի հրամանատար, պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով շարքային Ն.Չիչակյանը: Նախնական քննության տվյալներով վերջինս տարբեր առիթներով պարբերաբար վիրավորել շարքային Ս. Համբարձումյանին՝ ստորացնելով նրա պատիվն ու արժանապատվությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով (պետի (հրամանատարի) կողմից այլ շահագրգռվածությունից ելնելով պաշտոնական լիազորությունների սահմանն անցնելը) և 360-րդ հոդվածի 2-րդ մասով (զինծառայողին վիրավորանք հասցնելը) նախատեսված հանցագործություններ կատարելու կասկածանքով Ն.Չիչակյանը մարտի 29-ին ձերբակալվել է: Նախաքննությունը շարունակվում է, կատարվում են անհրաժեշտ քննչական գործողություններ՝ դեպքի բոլոր հանգամանքների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտումն ապահովելու ուղղությամբ:¹³¹

12. Գևորգ Արմենի Ասոյան

2016 թ. ապրիլի 1-ին՝ ժամը 09:00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ Տավուշի մարզի Իջևանի N գորամասի մարտական դիրքում գլխի շրջանում ստացած մահացու հրազենային վիրավորումից մահացել է 19-ամյա Գևորգ Ասոյանը:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 6-րդ կայագորային քննչական բաժնում ձեռնարկվել և շարունակվում են կատարվել անհրաժեշտ քննչական և դատավարական այլ գործողություններ՝ զինծառայողի մահվան հանգամանքները պարզելու նպատակով:

Քննությամբ բավարար ապացույցներ են ձեռք բերվել, որ դեպքին նախորդած ժամանակահատվածում՝ մարտի 29-ին, ապրիլի լույս 1-ի գիշերը Գ.Ասոյանին վիրավորել, պատիվն ու արժանապատվությունը ստորացրել է նույն գորամասի մեկ այլ զինծառայող, շարքային Մ.Մելիքյանը:

Վերջինիս ապրիլի 13-ին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով (3 դրվագ): Նույն օրը քննիչը միջնորդություն է ներկայացրել նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է:¹³²

¹³¹ <http://www.investigative.am/news/view/sevak-hambarcumyan-hramanatar-kalanq.html>

¹³² <http://investigative.am/news/view/zincarayox-asoyan-gevorg.html>

13. Գեղամ Ալբերտի Եղիազարյան

2016 թ. սեպտեմբերի 5-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում ՀՀ ՊՆ N գործառնապահ պահպանության տեղամասի մարտական դիրք տանող ճանապարհը կրճատող ժայռի տակ՝ քարափի մեջ, հայտնաբերվել է նույն գործառնապահ ենթասպա Գեղամ Ալբերտի Եղիազարյանի դին:

ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ ութերորդ կայազորային քննչական բաժնում ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական գործողություններ՝ Գ.Եղիազարյանի մահվան հանգամանքները պարզելու ուղղությամբ:¹³³

Դ. Ինքնասպանություն, Ինքնասպանության հասցնել

1. Դավիթ Վահեի Տերտերյան

2016 թ-ի փետրվարի 18-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված գործառնապահից մեկի պահպանության տեղամասում հրազենային մահացու վիրավորում է ստացել ՊԲ պարտադիր ժամկետային զինծառայող, 1997թ. ծնված Դավիթ Վահեի Տերտերյանը:¹³⁴

Դեպքի վայրի և դիակի նախնական զննության արդյունքներով՝ գլխի ճակատային շրջանում ստացած հրազենային մահացու մարմնական վնասվածքով մահացած զինծառայողի մահվան փաստով առաջին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ինքնասպանության հասցնելու հատկանիշներով:

Դեպքի առթիվ կատարվում է նախաքննություն: Քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար նշանակվել են փորձաքննություններ:¹³⁵

Դավիթը Երևանի բնակիչ էր: Նա 8 ամիս առաջ էր զորակոչվել՝ կիսատ թողնելով ուսումը Ավանի բժշկական քոլեջի ատամնաբուժական բաժնում: Նա երկու քույր ու մեկ եղբայր ուներ: NEWS.am-ի հետ զրույցում Դավիթի հորեղբայր Ռուբեն Տերտերյանը հայտնել է, որ ստույգ չգիտեն, թե ինչ է պատահել, բայց ինքնասպանության վարկածը բացառում են: Հորեղբոր խոսքով՝ Դավիթը դեպքից մեկ օր առաջ խոսել է ընտանիքի անդամների հետ: Նա բարձր տրամադրություն է ունեցել

¹³³ <http://investigative.am/news/view/entaspam-mah.html>

¹³⁴ <http://www.lragir.am/index/arm/0/country/view/127976>

¹³⁵ <http://investigative.am/news/view/davit-terteryan-qrgorc.html>

և ասել է, որ իրեն լավ է զգում: Հուղարկավորությանը մասնակցած ծառայակից ընկերները հարազատներին հայտնել են, որ կրակոցի ձայն լսելուց հետո նրան հայտնաբերել են ընկած վիճակում: Նրանք ասել են, որ Դավիթը ոչ ծառայակիցների, ոչ էլ հրամանատարության հետ խնդիրներ չի ունեցել, նրա վարքում ոչ ոք սարօրինակություններ չի նկատել: ¹³⁶

2. Թեմուր Շարիի Սուլոյան

2016 թ-ի փետրվարի 19-ին՝ ժամը 07:00-ի սահմաններում, ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում տեղի ունեցած արտակարգ պատահարի հետևանքով հրազենային մահացու վիրավորում են ստացել ՊԲ զինծառայողներ, 1997թ. ծնված Կամո Արայի Հովհաննիսյանը և Թեմուր Շարիի Սուլոյանը: ¹³⁷

Նախնական տվյալներով՝ 2016 թվականի փետրվարի 19-ին՝ ժամը 06:50-ի սահմաններում, N գորամասի 3-րդ ջոկի գնդացրորդ, շարքային Թ.Սլոյանը, նույն գորամասի պահպանության տակ գտնվող մարտական դիրքի դիտակետի մոտ իրեն ամրակցված գնդացրից կրակել է նույն ջոկի հրամանատար, մարտական դիրքի ավագ, կրտսեր սերժանտ Կամո Հովհաննիսյանի դեմքի շրջանին: Ստացած վնասվածքից Կ.Հովհաննիսյանը տեղում մահացել է, որից հետո շարքային Սլոյանը ինքն իրեն գլխի շրջանում պատճառել է հրազենային մահացու վիրավորում: Զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 110-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ ¹³⁸

Զոհված Թեմուր Շարիի Սուլոյանը ազգությամբ եզդի էր, նա Կոտայքի մարզի Պոռոշյան համայնքից էր, միակողմանի ծնողազուրկ և բնորոշվում էր որպես դրական երիտասարդ:

«Իմ երեխեն իրան չի սպանել, իմ երեխեն գիտեր, որ ես մենակ եմ, ասում էր՝ մա՛մ ջան, պիտի գամ՝ քեզ հասնեմ, իրանք են իմ երեխուն սպանել», - yerkir.am-ի հետ զրույցում հայտնել է Թեմուրի մայրը՝ նշելով, որ մինչև վերջ պայքարելու է՝ իրականությունը բացահայտելու համար:

¹³⁶ <http://news.am/arm/news/314979.html>

¹³⁷ <http://www.lragir.am/index/arm/1/country/view/128037#sthash.p2WHRuiV.dpuf>

¹³⁸ <http://investigative.am/news/view/erku-zincarayoxi-mah.html>

Մայրը պատմել է, որ որդու հետ խոսել է դեպքի նախորդ օրը: Նաասել է, որ Թեմուրը երկրորդ անգամ էր դիրքեր բարձրացել:¹³⁹

3. Սարգիս Դավիթի Օհանյան

2016 թ-ի մարտի 11-ին՝ ժամը 15:45-ի սահմաններում, ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում նոնակի պայթյունից մահացու վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 1997 թ. ծնված Սարգիս Դավիթի Օհանյանը:¹⁴⁰

Առաջին կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ժամկետային զինծառայող, շարքային Սարգիս Օհանյանի մահվան դեպքի առթիվ:

Հանցագործության հետքեր, այլ նյութական օբյեկտներ հայտնաբերելու, ինչպես նաև դեպքի համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքները պարզելու նպատակով կատարվել են դեպքի վայրի, Ս.Օհանյանի դիակի արտաքին, դեպքի պահին նրա հագին եղած զրահաբաճկոնի և հագուստների գնումներ: Դրանց արդյունքները բավարար հիմքեր են տվել ենթադրելու, որ նոնակը պայթել է Ս.Օհանյանի գործողությունների արդյունքում:

Դեպքի առթիվ առաջին կայագորային քննչական բաժնում ինքնասպանության հասցնելու հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:¹⁴¹

4. Կամո Վաչիկի Մարտիրոսյան

2016 թ. մարտի 14-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N գորամասի պահպանության շրջանի մարտական դիրքում մահացու հրազենային վիրավորում է ստացել պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Կամո Վաչիկի Մարտիրոսյանը:¹⁴²

Նախնական քննության տվյալներով՝ պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Կամո Մարտիրոսյանը 14.03.2016 թվականին՝ ժամը 16:00-ի սահմաններում, իր ծառայության վայրում իրեն ամրակցված «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգով ինքն իրեն ստորին ծնոտի շրջանից պատճառել է միջանցիկ մահացու հրազենային վիրավորում:

¹³⁹ <http://www.yerkir.am/news/view/101561.html>

¹⁴⁰ <http://www.lin.am/1879130.html>

¹⁴¹ <http://www.investigative.am/news/view/sargis-ohanyan.html>

¹⁴² <http://www.mil.am/hy/news/3914>

Ըստ ՀՀ Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության՝ դեպքի առթիվ նույն օրը Քննչական կոմիտեի ՁԲԳՎ վեցերորդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով:

Քրեական գործով կատարվել է դեպքի վայրի զննություն, մարտական հենակետում ծառայության նշանակված բոլոր զինծառայողներին ամրակցված զենք-զինամթերքի զննում, կատարվել են առգրավումներ: Ձեռնարկված քննչական գործողությունների արդյունքում բավարար ապացույցներ են ձեռք բերվել, որ դեպքին նախորդած ժամանակահատվածում զինծառայող Կ. Մարտիրոսյանին պարբերաբար վիրավորանք է հասցվել համաժառայակիցների կողմից՝ տարբեր պատճառներով հնչեցվել հայեցողություններ, վիրավորական այլ արտահայտություններ: Բազմակողմանի քննության արդյունքում բացահայտվել են հանցագործության այլ դրվագներ ևս:

Ձեռք բերված ապացույցների հիման վրա 5 զինծառայողի, որոնցից 4-ը՝ պարտադիր ժամկետային, իսկ 1-ը՝ պայմանագրային, առաջադրվել են մեղադրանքներ: 2 ժամկետային զինծառայողի մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով (Ձորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին վիրավորանք հասցնելը մեկ այլ զինծառայողի կողմից), 2 ժամկետային զինծառայողի մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով (Ձինծառայողին վիրավորանք հասցնելը, որը կատարվել է ստորադասի (ենթակայի) կողմից պետի (հրամանատարի), ինչպես նաև՝ պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ): Պայմանագրային զինծառայող, ավագ սերժանտին մեղադրանք է ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով, 365-րդ հոդվածի 1-ին մասով (Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը) և 375-րդ հոդվածի 1-ին մասով (Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը):¹⁴³

[NEWS.am](http://news.am)-ի հետ զրույցում մահացած զինծառայողի եղբայրը՝ Հայկը պատմել է, որ Կամոն դեպքից երեք օր առաջ էր խոսել իր հետ, դժգոհել էր ծառայությունից՝ նշելով, որ եղբայրը չի մանրամասնել, թե ինչից է դժգոհ:

¹⁴³ <http://investigative.am/news/view/kamo-martirosyan-mexadranqner.html>

«Ասեց՝ լավ չի, կուզեի տեղափոխվեի ուրիշ գորամաս: Զանգեց, ասեց՝ մի քանի օր էլ չեմ գանգի, մամային կասես՝ թող պինդ մնա, քանի ես սաղ եմ, քանի ես ստեղ եմ, թող հանգիստ լինի»:¹⁴⁴

5. Մեսրոպ Ղուրշուղյան

2016 թ. մարտի 29-ին Արմավիր քաղաքի Գորկու փողոցի 5-րդ նրբանցքի տներից մեկի լողաբանում կախվելու եղանակով ինքնասպան է եղել Արագածոտնի մարզի Հնաբերդ գյուղի 29-ամյա բնակիչ, ՀՀ ՊՆ N գորամասում, 2-րդ դասակի հրամանատարն էր, կոչումով՝ կապիտան Մեսրոպ Ղուրշուղյանը:¹⁴⁵

Դեպքի առթիվ Արմավիրի մարզային քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Կատարվում են անհրաժեշտ քննչական գործողություններ՝ դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ: Դեպքի վայրի գննության ժամանակ առգրավվել է Մ.Ղուրշուղյանի համակարգիչը, բջջային հեռախոսը, գրառումներով տետր: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:¹⁴⁶

[NEWS.am](http://news.am)-ի հետ զրույցում Հնաբերդի գյուղապետ Գոռ Հունանյանը նշել է, որ 29-ամյա կապիտանը Արմավիրում վարձով է բնակվել ընտանիքի հետ, սակայն այդ օրը նրա ընտանիքի անդամները եղել են Հնաբերդում: Նա ամուսնացած էր, ուներ մեկ անչափահաս երեխա:¹⁴⁷

Դեպքի առիթով չկա որևէ պաշտոնական հաղորդագրություն, հետևաբար պարզ չէ նաև, թե որն է եղել կապիտանի ինքնասպանության պատճառը:

6. Հովհաննես Վաչիկի Պետրոսյան

2016 թ. ապրիլի 25-ին՝ ժամը 20:15-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N գորամասի կրակային դիրքում գլխի շրջանում ստացած մահացու հրազենային վիրավորումով հայտնաբերվել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Հովհաննես Վաչիկի Պետրոսյանը՝ իրեն ամրակցված «ԳԱԶ 66» մակնիշի զինհամարանիշի կունգի թափքում:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու ժամկետային

¹⁴⁴ <http://news.am/arm/news/316992.html>

¹⁴⁵ <http://henaran.am/187877.html>

¹⁴⁶ <http://investigative.am/news/view/xurshudyan-mah.html>

¹⁴⁷ <http://news.am/arm/news/319567.html>

զինձառայող Հովհաննես Վաչիկի Պետրոսյանի մահվան հանգամանքները: Քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 110 հոդվածի հատկանիշներով (ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը):¹⁴⁸

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հարուցված քրեական գործի շրջանականերում իրականացնելու է տուժողի իրավահաջորդի իրավունքների պաշտպանությունը՝ հանդես գալով որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ:

Հովհաննես Պետրոսյանի մահվան դեպքով հարուցված քրեական գործի նախաքննությունն ավարտվել է, գործն ուղարկվել է վերահսկող դատախազին:

7. Սևակ Նորայրի Խաչատրյան

2016 թ. ապրիլի 12-ին՝ ժամը 10:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N գորամասի ղիտակետում գլխի շրջանում ստացած մահացու հրազենային վիրավորումով հայտնաբերվել է պարտադիր ժամկետային զինձառայող, շարքային Սևակ Նորայրի Խաչատրյանը:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 9-րդ կայազորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու ժամկետային զինձառայող Սևակ Խաչատրյանի մահվան հանգամանքները: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը սկսել է զբաղվել Սևակ Խաչատրյանի գործով, շուտով կներգրավվի որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ: Քրեական գործը հարուցվել է ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի ղիտավորությամբ կամ անզուգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Սևակ Խաչատրյանի հոր՝ Նորայր Խաչատրյանի ցանկությամբ, հարուցված քրեական գործի շրջանականերում իրականացնելու է տուժողի իրավահաջորդի իրավունքների պաշտպանությունը՝ հանդես գալով որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ:

Ներկայումս ավարտվել է հարուցված քրեական գործի նախաքննությունը, գործն ուղարկվել է վերահսկող դատախազին:

¹⁴⁸ <http://news.am/arm/news/327165.html>

8. Հրանտ Գարուշի Գրիգորյան

2016 թ-ի հունիսի 17-ին՝ ժամը 10:45-ի սահմաններում, հարավարևելյան ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի մարզումների անցկացման վայրում, դեռևս չպարզված հանգամանքներում, մահացու հրազենային գնդակային վիրավորում է ստացել զինծառայող, 1997թ. ծնված Հրանտ Գարուշի Գրիգորյանը:¹⁴⁹

Դեպքի մանրամասները պարզելու համար կատարվում է քննություն:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնում քննությամբ պարզվել է, որ ժամկետային զինծառայողի նկատմամբ դեպքի նախորդող օրը՝ հունիսի 16-ին, ֆիզիկական բռնություն է գործադրել դասակի հրամանատար Վ.Բալայանը: Բացի այդ, 2016 թվականի հունիսի 17-ին՝ ժամը 10:00-ի սահմաններում, փորձնական զորավարժության ընթացքում զինծառայող Հրանտ Գրիգորյանը վատ զգալու պատճառով չի շարունակել զորավարժությունը, ինչի կապակցությամբ Վ.Բալայանը վիրավորել է զինծառայողին՝ հայիոյելով նրան:

Ձեռք բերված ապացույցների հիման վրա՝ Վ. Բալայանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով (Զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ստորադասին (ենթակային) ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը) և 360-րդ հոդվածի 2-րդ մասով (Զինծառայողին վիրավորանք հասցնելը պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ): Քննիչը միջնորդություն է ներկայացրել դատարան՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է:

Դեպքի վերաբերյալ հարուցված քրեական գործով կատարվող նախաքննության վերաբերյալ պաշտոնական այլ տեղեկատվություն չի տարածվել:¹⁵⁰

9. Արսեն Արթուրի Մխիթարյան

2016 թ. հուլիսի 3-ին՝ ժամը 10:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N գորամասի մարտական դիրքում հայտնաբերվել է ժամկետային զինծառայող, շարքային 19-ամյա Արսեն Արթուրի Մխիթարյանի դին՝ կզակի շրջանում մահացու հրազենային վնասվածքով:

¹⁴⁹ <http://razm.info/84664>

¹⁵⁰ <http://investigative.am/news/view/hrant-grigoryan-mah-mexadranq.html>

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ վեցերորդ կայագորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:¹⁵¹

Դեպքի վերաբերյալ հարուցված քրեական գործով կատարվող նախաքննության վերաբերյալ պաշտոնական այլ տեղեկատվություն չի տարածվել:

10. Վահան Վահեի Միքայելյան

2016 թ. օգոստոսի 4-ին՝ ժամը 09:30-ի սահմաններում, զինծառայող Վահան Վահեի Միքայելյանը՝ ծնված 1997թ-ին ստացել է մահացու վիրավորում:

Ինչպես հայտնել է ՀՀ Քննչական կոմիտեն զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայագորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու պարտադիր ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Վահան Վահեի Միքայելյանի հրազենային մահացու վիրավորում ստանալու հանգամանքները:

Հանգամանքները դեռևս չեն պարզվել, դեպքը տեղի է ունեցել ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում:

Դեպքի վերաբերյալ հարուցված քրեական գործով կատարվող նախաքննության վերաբերյալ պաշտոնական այլ տեղեկատվություն չի տարածվել:¹⁵²

11. Մ. Հարությունյան

2016 թ. հոկտեմբերի 31-ին Վանաձորի իր բնակարանում կախվելու միջոցով ինքնասպանություն է գործել Վանաձոր քաղաքի բնակիչ Մ. Հարությունյանը:

Ըստ լրատվական միջոցների կողմից տարածված տեղեկատվության Մ. Հարությունյանը զինվորական էր՝ ենթասպա:¹⁵³

ՀՀ ՊՆ-ի կամ ՀՀ Քննչական կոմիտեի կողմից որևէ հաղորդագրություն այս դեպքի վերաբերյալ չի տարածվել:

12. Իվան Դավիթի Հայրապետյան

2016 թ. նոյեմբերի 17-ին՝ ժամը 21:50-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի 1-ին հրաձգային գումարտակի հսկիչ-անցագրային կետի շինությունում հայտնաբերվել է 2016 թվականի նոյեմբերի 17-ից մինչև 18-ը գումարտակի արագ արձագանքման

¹⁵¹ <http://investigative.am/news/view/zincarayox-arsen-mxitaryan.html>

¹⁵² <http://nkrmil.am/news/view/1429>

¹⁵³ <http://shamshyan.com/hy/article/2016/10/31/99920/>

խմբում ծառայության ընդգրկված նույն գումարտակի գնդացրորդ, պայմանագրային զինծառայող Իվան Դավիթի Հայրապետյանի դիակը:

Տեղեկատվության առաջնային և միակ աղբյուր հանդիսացող ՀՀ Քննչական կոմիտեն տարածած հաղորդագրության մեջ նշում է, որ զինծառայողը մահացել է բերանի աջ ստորին և գլխի ձախ գազաթային հատվածներում միջանցիկ հրազենային վնասվածքից: Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ՁՔԳՎ վեցերորդ կայագրային քննչական բաժնում քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով:¹⁵⁴

Դեպքի և հարուցված քրեական գործի հետագա ընթացքի մասին պաշտոնական որևէ տեղեկատվություն չի տարածվել:

13. Ալբերտ Հակոբի Պոստոլոկյան

2016 թ. դեկտեմբերի 7-ի լույս 8-ի գիշերը հյուսիսարևելյան /Մարտակերտ/ ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, ըստ ԼՂ ՊՆ մամուլի ծառայության պաշտոնական կայք էջի տարածած տեղեկատվության, արտակարգ միջադեպ էր տեղի ունեցել, որի արդյունքում մահացու հրազենային վիրավորում է ստացել ժամկետային զինծառայող, 1996թ. ծնված Ալբերտ Հակոբի Պոստոլոկյանը:¹⁵⁵

2016 թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ Քննչական կոմիտեն տարածեց հաղորդագրություն, որում պարզվում էին տեղի ունեցած դեպքի հանգամանքները: Մասնավորապես՝ նախնական տվյալներով՝ զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքի, առույգ հերթափոխի դիտորդ, նոնակաձիգի օգնական, ժամկետային զինծառայող, շարքային Ալբերտ Հակոբի Պոստոլոկյանը 2016 թվականի դեկտեմբերի 08-ին՝ ժամը 02:10-ի սահմաններում, ծառայողական նպատակով իրեն տրամադրված նոնակը նետել է գետնատնակի մուտքի ուղղությամբ, որի պայթյունից բեկորային վիրավորում է ստացել հերթափոխի՝ հանգստացող ավագ հրաձիգ, ժամկետային զինծառայող, շարքային Գառնիկ Հայկի Տերտերյանը, որից հետո իրեն ամրակցված ինքնաձիգից կրակոցներ է արձակել իր ծնոտի շրջանում և ստացած հրազենային վիրավորումից տեղում մահացել է:

Տեղի ունեցած դեպքի առթիվ Զինվորական դատախազությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և

¹⁵⁴ <http://investigative.am/news/view/ivan-hayrapetyan.html>

¹⁵⁵ <http://nkrmil.am/news/view/1625>

110-րդ հոդվածի 1-ին մասով եւ ուղարկվել Երրորդ կայագորային քննչական բաժին՝ նախաքննություն իրականացնելու:

Դեպքի ժամանակ վիրավորում ստացած Գ.Տերտերյանը տեղափոխվել է զինհոսպիտալ, նրա կյանքին վտանգ չի սպառնում:¹⁵⁶

Ե. Մարտական ծառայությունների կրելու կանոնների խախտում

1. Ռոբերտ Աբրահամի Աբրահամյան

2016 թ. ապրիլի 10-ին՝ ժամը 02:15-ի սահմաններում, Թալիշի մարտական դիրքում պայմանագրային զինծառայող Ռոբերտ Աբրահամյանը սպանվել է գլխի շրջանում ստացած հրազենային վիրավորումից:

Դեպքի առթիվ 3-րդ կայագորային քննչական բաժնում՝ ծանր հետևանքների առաջացմամբ զուգորդված մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ, կատարվում է նախաքննություն:¹⁵⁷

2. Արման Ալիկի Ղանդիլյան

2016 թ. սեպտեմբերի 7-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, ՊԲ հյուսիս-արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, մարտական հերթապահության կրման կանոնների խախտման արդյունքում, մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, 1997թ. ծնված Արման Ալիկի Ղանդիլյանը:

Դեպքի վերաբերյալ հարուցված քրեական գործով կատարվող նախաքննության վերաբերյալ պաշտոնական այլ տեղեկատվություն չի տարածվել:¹⁵⁸

3. Նարեկ Գառնիկի Փաթաթանյան

2016 թ. սեպտեմբերի 16-ին՝ ժամը 13:00-ի սահմաններում, ՊԲ կենտրոնական ենթակայության զորամասերից մեկում, դեռևս չպարզված հանցամասնքներում, մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, 1997թ. ծնված Նարեկ Գառնիկի Փաթաթանյանը:¹⁵⁹

¹⁵⁶ <http://investigative.am/news/view/zinvor-mah-bekorayin-viravorum.html>

¹⁵⁷ <http://investigative.am/news/view/zincarayox-robert-abrahamyan.html>

¹⁵⁸ <http://nkrmil.am/news/view/1486>

¹⁵⁹ <http://nkrmil.am/news/view/1501>

Ինչպես հայնում է ՀՀ Քննչական կոմիտեն դեպքի առթիվ առաջին կայագորային քննչական բաժնում հարուցված քրեական գործի նախաքննությամբ ձեռնարկված մեծածավալ քննչական գործողությունների արդյունքում բացահայտվել են ժամկետային զինծառայողի մահվան մի շարք հանգամանքներ, նրա նկատմամբ ծառայակիցների կողմից կիրառված բռնարարքի մի շարք դեպքեր, հանցագործությունների տարբեր դրվագներ:

Ձեռք բերված ապացույցների համակցությամբ՝ ժամկետային զինծառայող Հ. Շահմուրադյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (Շորթում՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ), 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (Ձինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում՝ մի խումբ անձանց կողմից (2 դրվագ):

Հ.Ալեքսանյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (Ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը), 365-րդ հոդվածի 1-ին մասով (Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը):

Վ. Վարդանյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 358-րդ հոդվածի 2-րդ մասով (Ձինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ պետին (հրամանատարին) ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը պետի (հրամանատարի) կամ նրա մերձավորի նկատմամբ), 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 365-րդ հոդվածի 1-ին մասով:

Լեյտենանտ Լ. Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով (Ձինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ստորադասին (ենթակային) ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը ստորադասի (ենթակայի) կամ նրա մերձավորի նկատմամբ), 375-րդ հոդվածի 1-ին մասով (Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը), 360-րդ հոդվածի 2-րդ մասով (Ձինծառայողին վիրավորանք հասցնելը, որը կատարվել է ստորադասի (ենթակայի) կողմից պետի (հրամանատարի), ինչպես նաև պետի (հրամանատարի) կողմից ստորադասի

(ենթակայի) նկատմամբ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ), 375-րդ հոդվածի 1-ին մասով ((Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը (3 դրվագ), և 314-րդ հոդվածի 1-ին մասով (Պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, ինչպես նաև կեղծ փաստաթղթեր կազմելը կամ հանձնելը),

Գ.Ղուկասյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրքային կանոնները խախտելու փորձը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում՝ մի խումբ անձանց կողմից), 38-358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (հանցակցությունը՝ ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելուն), 365-րդ հոդվածի 1-ին մասով և 182-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Շարքային Գ. Մուսիկյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով, և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ՀՀ ՊՆ N գորամասի հրամանատարության հսկողությանը հանձնելը:

Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:¹⁶⁰ Դեպքի վերաբերյալ հարուցված քրեական գործով կատարվող նախաքննության վերաբերյալ պաշտոնական այլ տեղեկատվություն չի տարածվել:

4. Վարդան Հովհաննեսի Առաքելյան

2016 թ. նոյեմբերի 13-ին՝ ժամը 02:15-ի սահմաններում, ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված գորամասերից մեկի պահպանության տեղամասում, դեռևս չպարզված հանգամանքներում, մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, 1995թ. ծնված Վարդան Հովհաննեսի Առաքելյանը:¹⁶¹

Ըստ ՀՀ Քննչական կոմիտեի տարածած հաղորդագրության 2016 թվականի նոյեմբերի 13-ին՝ ժամը 02:15-ի սահմաններում, կրտսեր սերժանտը, նշանակված

¹⁶⁰ <http://investigative.am/news/view/patatanyan-6-zincarayoxi-mexadranq.html>

¹⁶¹ <http://www.nkrmil.am/news/view/1594>

լինելով մարտական հերթապահության զորամասի պահպանության տեղամասի N մարտական դիրքում, խախտել է մարտական հերթապահության կանոնները, իրեն ամրակցված ինքնաձիգով կրակոցներ է արձակել նույն զորամասի պահանության տեղամասի մեկ այլ մարտական դիրքի ուղղությամբ, ինչի հետեւանքով նոնակաձիգի օգնական, շարքային Վարդան Հովհաննեսի Առաքելյանն ստացել է մահացու հրազենային վիրավորում:

Դեպքի առթիվ Ջինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով:¹⁶²

ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հրամագրով Վարդան Հովհաննեսի Առաքելյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Զ. Առողջական

1. Սուրեն Արմենի Մոսիյան

2016 թ. մայիսի 29-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, ՊԲ հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի կրակային դիրքում հանկարծամահ է եղել զինծառայող, 1997թ. ծնված Սուրեն Արմենի Մոսիյանը:

Զինծառայողի մահվան հանգամանքները պարզելու համար կատարվում է քննություն: ՀՀ Քննչական կոմիտեի ՉՔԳՎ երկրորդ կայազորային քննչական բաժնում 2016 թ. մայիսի 31-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի, 2-րդ մասով՝ Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ՝ ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունքը, որը պատճառել է էական վնաս պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: Նույն արարքները, եթե անզուգուրությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով: Գործով ներկա պահին կա երկու ձեռքակալված:¹⁶³

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները Սուրեն Մոսիյանի ընտանիքի անդամների հանդիպման ժամանակ տեղեկացան, որ Սուրեն Մոսիյանը ուներ լուրջ առողջական խնդիրներ՝ երկամների հիվանդություն, գիշերամիզություն, որի

¹⁶² <http://investigative.am/news/view/vardan-aragelyan.html>

¹⁶³ <http://razm.info/83921>

կապակցությամբ նույնիսկ գորակոչման ընթացքում չեն զննել, սրտային անբավարարություն:

Սուրեն Մոսիյանը, ըստ մահվան վկայականում նշված տվյալների, մահացել է սուր սրտային անբավարությունից և թոքերի այտուցից:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը ստանձնել է Սուրեն Մոսիյանի մոր իրավունքների պաշտպանությունը և իրականացնելու է անհրաժեշտ գործողություններ արդար քննություն և դատաքննություն իրականացնելը ապահովելու համար:

Սուրեն Մոսիյանի մահվան դեպքով հարուցված քրեական գործով ներկայումս իրականացվում է նախաքննություն, նշանակված են մի շարք փորձաքննություններ:

2. Դերենիկ Արտակի Խալխալյան

2016 թ. հոկտեմբերի 30-ին iravaban.net լրատվական կայքի տարածած տեղեկատվության համաձայն՝ նույն օրը՝ առավոտյան ժամը 09:20-ի սահմաններում, Նոյեմբերյանի բժշկական կենտրոն է տեղափոխվել պայմանագրային զինձառայող Դերենիկ Արտակի Խալխալյանը:

2016 թ. հոկտեմբերի 31-ին ՀՀ Քննչական կոմիտեի կողմից տարածված հաղորդագրության մեջ նշվում էր, որ 2016 թ. հոկտեմբերի 30-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N գորամասի պահպանության շրջանում տեղակայված մարտական դիրքում կտրուկ վատացել է մարտական հերթապահության նշանակված պայմանագրային զինձառայող, 1987թ. ծնված Դերենիկ Արտակի Խալխալյանի ինքնազգացողությունը:

Նոյեմբերյանի ԲԿ տեղափոխվելու ճանապարհին Դ.Խալխալյանը մահացել է: Բժշկական նախնական հետազոտության համաձայն՝ զինձառայողի մոտ արձանագրվել է սրտի կանգ:

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ վեցերորդ կայագրային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու Դ.Խալխալյանի մահվան հանգամանքները: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Դեպքի վերաբերյալ ՀՀ Քննչական կոմիտեի կողմից տարածված տեղեկատվությունն իր մեջ պարունակում է անհամապատասխանություն մինչ այդ iravaban.net¹⁶⁴ կայքի կողմից տարածված տեղեկատվության հետ: Մասնավորապես՝

¹⁶⁴ <http://iravaban.net/143071.html>

ԶԼՄ-ն տեղեկատվությունը տարածել է հոկտեմբերի 30-ին, ժամը՝ 18:29-ին, հայտնելով, որ դեպքը տեղի է ունեցել նույն օրն առավոտյան ժամը՝ 09:20-ի սահմաններում: ՀՀ Քննչական կոմիտեի կողմից հոկտեմբերի 31-ին տարածված տեղեկատվության մեջ նշվում է, որ դեպքը տեղի է ունեցել հոկտեմբերի 30-ին, ժամը՝ 20:00-ի սահմաններում:¹⁶⁵

¹⁶⁵ <http://investigative.am/news/view/zincarayox-xalalyan-mah.html>